

ՀԲԸՄ

ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2008 - 2009

ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ 86^{րդ} ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 16, 2010 ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԺԱՆԹԻՆ



ՀԲԸՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ 2008 – 2009

Նախագահ
Պերն Սեդրակեան

Փոխ Նախագահ
Արշալիր Կէօննեան

Գանձապահ
Սէմ Սիմոնեան

Ատենադպիր
Պերն Փափագեան

Պատուոյ Անդամ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոս

Անդամներ

ԱՄՆ՝ Մ. Մայրըլ Անսուր, Գերօլ Պաղտասարեան-Ասլանեան, Ժոզէֆ Պասրալեան, Երուանդ Տեմիրեան, Նազարէթ Ֆըստըֆնեան, Արտա Յարութիւնեան, Սարգիս Ճէպէնեան, Լեւոն Նազարեան, Սինան Սինանեան, Տիգրան Թեւրիզեան, Երուանդ Զօրեան (Հոկտեմբեր 2008էն)
ԱՐԺԱՆԹԻՆ՝ Ռուբէն Քէշիշեան
ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան, Լեւոն Քէպապնեան (մինչեւ Հոկտեմբեր 2008)
ԶՈՒՅՑԵՐԻՍ՝ Վահէ Կապրաշ
ՍՈՒՐԻԱ՝ Վազգէն Եագուպեան

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

Սարգիս Տեմիրեան, Րիչըրտ Մանուկեան, Նազար Նազարեան,
Լուիզ Մանուկեան Սիմոն, Գառնիկ Եագուպեան

Պատուակալ Անդամ
Պէրի Զօրթեան

Ի յիշատակ
Պօղոս Նուպար, Հիմնադիր
Ալեք Մանուկեան, Ցկեանս Պատուակալ Նախագահ

Կողմի լուսանկար՝ 2009ի Երեւանի Ամառնային Ասպարէզային
Փորձառութեան մասնակիցները Սարդարապատի մէջ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 2 - 3 Նախագահին Խօսք
 - 4 - 5 Նիւթական Տեղեկագիր 2008 - 2009
 - 6 - 9 Հայաստան / Ղարաբաղ
 - 10 - 13 Կրթական
 - 14 - 17 Ասպարէզային Փորձառութեան Ամառնային եւ Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրներ
 - 18 - 32 Մասնահիւղեր
 - 33 ՀԲԸՄի Յանձնաժողովներու եւ Մասնահիւղերու Ատենապետներ 2008-2009
 - 34 Լուսարձակ
 - 35 Կատարողական Արուեստ
 - 36 - 37 ԿԻԶԱԿԷՏ (FOCUS) Երկամեայ Շաբաթավերջ
 - 38 - 41 Երիտասարդ Արհեստավարժներ
 - 42 - 47 Երիտասարդութիւն
 - 48 Մամուլ եւ Հրատարակութիւններ
- Կոնակի կողմի Գերբիւն էջ 2008 եւ 2009 Հ.Բ.Ը.Միութեան Ծրագիրներ



Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ Պերն Սեդրակեան, ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ, Ատենապետներ, Բարերարներ, Միութեան անդամներ եւ պաշտօնէութիւնը հաւաքուած ՀայկաԿի «Շերաթոն» պանդոկի մուտքին առջեւ, Միութեան 85-րդ Ընդհանուր Ժողովին աուիթոՎ, Հոկտեմբեր 2008ին:

Նախագահին Խօսքը

Մեր Անդամակցության, Նուիրատուներուն և Բարեկամներուն



Երկամայ Տեղեկագիրը յստակօրէն կը պատկերացնէ մեր աշխարհատարած Միութեան բազմաթիւ իրագործումները: Միաժամանակ անիկա առիթ մըն է արժեւորելու մեր ներկայ գործունէութիւնը, ապագայի հրամայականներուն դիմաց վերակողմնորոշելու և նոր տեսլականներ ստեղծելու համար:

Անցնող երկու տարիները ցուցաբերեցին մեր Ընդհանուր Միութեան նպատականսեւեռ բնոյթը և տոկուն ուժականութիւնը: Տնտեսական,

ընկերային և քաղաքական բարդ խնդիրներուն ու հրամայականներուն դիմաց, որոնք յուզեցին համաշխարհային լայն շրջանակները և յատկապէս Հայաստանը, Հ.Բ.Ը.Միութիւնը պահպանեց յստակ և հետեւողական ընթացք, շարունակելով իր ազգային, մշակութային, ընկերային, կրթական և մարդասիրական բազմաբնոյթ ծառայութիւնները, օժանդակելով Հայաստանի կարիքներուն և ստատրեյվ աշխարհատարած հայութեան բարօրութեան:

Այս իրագործումները կարելի դարձան շնորհիւ Կեդրոնական Վարչական և Խորհրդական ժողովներու բժախնդիր ծրագրումին և առաջնորդութեան, պաշտօնէութեան պարտանանաչ աշխատանքին, և յատկապէս աշխարհատարած նուիրատուներուն, շրջանակներուն, մասնաճիւղներուն և անդամակցութեան վստահութեան, հաւատարմ գործունէութեան ու համադրեալ ճիգերուն:

Այս նախադրեալները միշտ կազմած են մեր Միութեան կառոյցի հիմքը: Անհրաժեշտ է որ պահպանենք այդ սեւեռումը և եռանդը, որպէսզի կարենանք դիմագրաւել մեր ժամանակներու բարդ հրամայականները:

Աշխարհաբաղաճական տարածքը և հայ կեանքը հունաւորող բարդ խնդիրները և զարգացումները, կը պահանջեն պայծառաստեւ, գործօն առաջնորդութիւն և բոլորանուէր ծառայութեան ոգի:

Իր պատմութեան ամբողջ ընթացքին, Հ.Բ.Ը.Միութեան որդեգրած կողմնորոշումները և գործունէութիւնները յատկանշուած են ազգային քաղաքական կեանքին ներս քաղաքական համարձակ և գործօն դերակատարութեամբ: Անցնող տարեշրջանին, Հայաստան-Թուրքիա

յարաբերութիւններուն վերաբերեալ բախտորոշ նախապայելուն և շրջանային թէ միջազգային դիւանագիտական ու հասարակական շրջանակներու մէջ անոնց ստեղծած զարգացումներուն և արձագանգներուն դիմաց, Հայաստան կարիք ունէր սփիւռահայ համայնքներու զօրակցութեան: Հ.Բ.Ը.Միութիւնը բանի մը այլ կազմակերպութիւններու հետ միասին, յատկանշականօրէն դիրքորոշուեցաւ հայրենի դեկավարութեան որդեգրած դիւանագիտական կեցուածքին կողմին, զայն նկատելով ազգային շահերու նպաստող խոհեմ քաղաքականութիւն, զօրակցութիւն ցուցաբերելով հայրենի ժողովուրդին և պետութեան: Որպէս արդիւնք, Հայաստան յաջողեցաւ ինքզինքն դրսեւորել իբր իրատես և տրամադիր կողմ շրջանային խաղաղութեան գործընթացին մէջ: Թէեւ ցարդ Թուրքիոյ հետ բանակցութիւնները սառեցուած են, բայց և այնպէս Հայաստան բանակցութեան սեղանին շուրջ նստելու իր վեճակամտութիւնը ցուցաբերելով, նկատառելի կշիռ և զգալի դրոշմ ապահովեց համաշխարհային դիւանագիտական շրջանակներու մէջ:

Նոյն գծով, Հ.Բ.Ը.Մ.ի Եւրոպայի շրջանակը բնորոշ դեր կը կատարէ հայկական հարցերու շուրջ Եւրոպական խորհրդարանը իրագեկ դարձնելու ուղղութեամբ: Տարբեր քաղաքական և գիտահետազոտական հաստատութիւններու հետ գործակցաբար առաջ տարուող աշխոյժ և հետեւողական աշխատանքներուն իբր արդիւնք, միջազգային քաղաքական գիտաժողովներու ընթացքին, առաջնահերթ ուշադրութեան առարկայ կը դառնան Հայ ժողովուրդի Ցեղասպանութեան նանաչումի և հատուցումի պատմական իրաւունքները, Արեւմտահայաստանի մէջ հայկական մշակութային հարստութիւններու փաստագրումի և պահպանումի նախաձեռնութիւնները և Լեւոնային Ղարաբաղի Հայկական Հանրապետութեան ինքնորոշման և անկախութեան մարդկային իրաւունքները:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը միշտ կը մնայ ոչ-քաղաքական համահայկական կազմակերպութիւն: Բայց և այնպէս իր էութեամբ, անոր գործունէութիւններուն և նախաձեռնութիւններուն հիմնական պատակն է ապահովել հայ ժողովուրդի գոյատեւումը և անվտանգութիւնը, Հայաստանի զարգացումն ու բարգաւաճումը և մեր ինքնութեան ու մշակութային ժառանգութիւններու պահպանումը, մշակումն ու փոխանցումը: Հետեւաբար մեր անդամակցութիւնը և ղեկավարութիւնը, մեր ազգի և աշխարհի նոր իրականութիւններուն և հրամայականներուն դիմաց, պատրաստ պէտք է ըլլան հայ ժողովուրդի շահերուն ի խնդիր համարձակ և շեշտակի դիրքորոշում ու համապատասխան գործընթաց որդեգրելու:

Հ.Բ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ կը շարունակէ ընդարձակել իր ներկայութիւնը յատուկ նախաձեռնութիւններով, մարդասիրական և ընկերային ծառայութիւններու ուղղուած մնայուն օժանդակութիւններով և բժշկական, ուսումնական,



Հ.Բ.Ը.Մ.ի Խնամակալներու Խորհուրդի և Կեդրոնական Վարչական ժողովի անդամներ: Ջախին աջ՝ Ժողէֆ Պարսլայան, Մայրի Անսուր, Պերն Սեդրակեան, Նազար Նազարեան, (Խնամակալ), Արշալիր Կէօնեան, Գեորգ Պաղտասարեան-Ասլանեան: Երկրորդ շարք՝ Երուանդ Ջօրեան, Արիս Աղամեան, Վահէ Կապրաշ, Երուանդ Տեմիրեան, Արտա Յարութիւնեան, Նազարէթ Յըստրֆեան, Պերն Փափագեան, Սինան Սինեան, Սէմ Սիմոնեան:



Ջախին՝ Վաչէ և Թամար Մանուկեան Պերն և Վերա Սեդրակեաններու հետ (աջին) Հ.Բ.Ը.Մ.ի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի կազմակերպած ճաշկերպի ընթացքին պատուուեցան բարերարներ Վաչէ և Թամար Մանուկեանները, որոնք 11 միլիոն ամերիկեան տոլար նուիրեցին Հ.Բ.Ը.Մ.ի Փաստօրինայի Վաչէ և Թամար Մանուկեան դպրոցին և Հարաւային Գալիֆորնիոյ Միութեան Կեդրոնին ու նպատա:

մշակութային եւ ընկերային հաստատութիւններու հետ սերտ գործակցութեամբ: Գլխաւոր նուիրատուներու կողմէ հովանաւորուած ծրագիրներուն աղբթեր, Միութեան շարք մը մասնակիւղերը եւ երիտասարդ Արհեստավարժներու Խմբակցութիւնները, իրենց ձեռնարկներու հասոյթներէն գոյացած գումարներով կ'օժանդակեն Հայաստանի մէջ գանազան ծրագիրներու: Երկամայ այս Տեղեկագրին մէջ մանրամասնուած են այդ օժանդակութիւնները եւ շարունակուող նախաձեռնութիւնները:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը անխախտ հաւատարմութիւն ցուցաբերած է Հայաստանեայց եկեղեցիին հանդէպ, գիտակից հայ ժողովուրդի գոյապահպանումին մէջ անոր կատարած պատմական դերին: Միութիւնը միշտ հաւատացած է թէ լաւագոյն կը ծառայէ Հայութեան, Հայաստանին եւ Հայաստանեայց եկեղեցիին հետ իր սերտակցութեամբ, որով ան կը զատորոշուի այլ կազմակերպութիւններէ: Հ.Բ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը, նուիրատուները եւ անդամակցութիւնը հետեւողականօրէն գորակցութիւն եւ մնայուն օժանդակութիւն կը ցուցաբերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ անոր աշխարհատարած եկեղեցական կառոյցներուն:

Անցնող երկու տարիներուն Հ.Բ.Ը.Մ. ի ծրագիրները եւ մասնակիւղերու գործունէութիւնները գլխաւորաբար կողմնորոշուեցան արդիականացումի եւ մերօրեայ իրականութեան ու նոր սերունդի կարիքներուն եւ ձգտումներուն հասնելու մտահոգութեամբ, նաեւ համապատասխան միջոցառումներով Միութեան նպատակներու արդիւնատուութիւնը ապահովող գործելակերպով: Մեր շարք մը նոր նախաձեռնութիւնները արդէն վերածուած են կազմակերպուած յաջող ծրագիրներու: Այս ծրագիրներուն մասնակցելու համար սփիւռֆահայ տարբեր համայնքներէ հետզհետէ անող թիւերով երիտասարդներ եւ երիտասարդուհիներ կը համախմբուին Հայաստանի մէջ եւ առիթ կ'ունենան բարեկամական սերտ կապեր հաստատելու իրարու միջեւ, միաժամանակ հաղորդուելով իրենց ապրող մշակոյթով ու ժառանգութեամբ:

Մեր տեղեկատուութեան եւ համացանցային հաղորդակցութեան միջոցները նոյնպէս ֆայլ կը պահեն ժամանակին հետ: «Արարատ» գրական-մշակութային հրատարակութիւնը այժմ լոյս կը տեսնէ համացանցի վրայ ու անելի նոյս եւ նկուն րովանդակութեամբ կը հասնի տարածուն շրջանակներու: Լայն տարածում ունեցող «Յուշարար»՝ Հ.Բ.Ը.Մ.իութեան պաշտօնաթերթը, կը շարունակէ Հայաստանը, հայութիւնը եւ Միութիւնը շահագրգռող իրադարձութիւններու շուրջ լուրջ եւ վերլուծական թղթակցութիւններ հրատարակելու: Ֆրանսերէնով լոյս տեսնող «Հայկական ժամանակակից Հարցերու Գիտական Հանդէս»-ը որ կը հրատարակուի Նուպարեան Մատենադարանին կողմէ, ուսումնասիրութիւններով եւ գիտական յօդուածներով կ'անդրադառնայ ժամանակակից պատմաբանասիրական խնդիրներու: Մասնակիւղերու հաղորդակցութիւնը իրենց կարգին շարունակաբար կը բարեկալեն իրենց միջոցները շրջանակներուն ու հանրութեան միջեւ կապերը գործցնելու եւ Միութեան գործունէութիւններն ու ծրագիրները ծանօթացնելու նպատակով:

Հ.Բ.Ը.Մ.իութեան կրթական համակարգը, որ Միութեան հիմնադրութեան առաջին իսկ օրէն դաստիարակչական ծաւալուն գործունէութիւն վարած է, սփիւռֆի հոլովոյթին եւ փոխուող պայմաններուն ու կարիքներուն համապատասխան միջոցառումներ եւ գործելակերպ որդեգրելու հրամայականները կը դիմագրայէ: Աւանդական կրթական կառոյցներէն դուրս, հասնելու համար նոր սերունդի լայն շրջանակներուն եւ անոնց դիմագիծի մշակումին ու ազգային կեանքի մէջ ընդգրկումի մտահոգութիւններուն, անհրաժեշտ է վերադասաւորել մեր միջոցները եւ կարելիութիւնները առանելագոյն արդիւնատուութեան նկատառումով: Մեր շրջանակները տնտեսական անող դժուարութիւններ կը դիմագրաւեն աշակերտներու թիւի նուազումի եւ ծնողներու ուսումնական փոխուող պահանջներուն եւ այլընտրանքներուն պատճառով: Հետեւաբար տեղական կրթական մարմինները, Միութեան կրթական Բաժնին հետ համախորհուրդ, վերակազմակերպչական աշխատանք կը կատարեն եւ այլընտրանքներ կը փորձեն, իրենց շրջանակի նիւթական

կարելիութիւններէն եւ գաղութի պահանջներէն մեկնելով:

Այլընտրանքներու գիծով յաջող եւ ժամանակակից աննախընթաց իրագործում մըն է անկասկած Հ.Բ.Ը.Մ.ի Համացանցային Հայկական Գոյէնթի ծրագիրը: Կեց լեզուներով եւ աշխարհագրական ու ժամանակի կաշկանդումներէն անկախ բոլորին հասնող այս ծրագիրը, հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ ամբողջական նիւթեր կը տրամադրէ հանրութեան: Ծրագիրը արդէն կը բոլորէ իր երկրորդ տարեշրջանը եւ լրացուցած է մէկ ամառնային եւ չորս կիսամեայ դասընթացներ, երեսունհինգ երկիրներէ անելի քան հինգ հարիւր ուսանողներու մասնակցութեամբ:

Միջոցներու արդիւնատու վերաբաշխումի գործընթացին մաս կը կազմէ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի համալսարանական կրթաթոշակներու վերաբերեալ մշակուած նոր փաղաքականութիւնը, որ կը միտի ընդարձակել ծրագիրը, հասնելու համար անելի մեծ թիւով խոստմնալի ուսանողներու, որոնք իրենց աշխատանքով, տաղանդով եւ արցունակութեամբ, ատակ են առաջնորդ դերեր վերցնելու արդի համաշխարհայնական եւ արագ զարգացող մասնագիտական շրջապատին մէջ: Միութեան կրթաթոշակները նաեւ իրենց ուղղուածութեամբ յաւելեալ նախապատուութիւն կու տան կատարողական արուեստներու, հանրային ծառայութեան եւ հոգեւորականներու պատրաստութեան մարզերուն:

Հ.Բ.Ը.Մ.իութեան երիտասարդական շարժումները արագ աճում արձանագրեցին անցնող երկու տարիներուն յատկապէս Եւրոպայի շրջանակներուն մէջ: Երիտասարդ Արհեստավարժներու գործունէութիւնը նիւղատուեցաւ դէպի Սպանիա, Գերմանիա եւ Ռուսիա: Ասպարէզային փորձառութեան ամառնային ծրագիրները այժմ կը գործեն Նիւ Եորքի, Փարիզի, Երեսնի եւ վերջերս նաեւ Մոսկուայի մէջ, հետզհետէ բազմացող շրջանաւարտներով, որոնք կը խտացնեն արհեստավարժ երիտասարդներու շարքերը:

Այս Ընդհանուր Ժողովի օրակարգի գլխաւոր նիւթերէն մին պիտի ըլլայ մեր երիտասարդ արհեստավարժ ուժերը Միութեան ղեկավարութեան մէջ ներգրաւելու ծրագիրը: Անհրաժեշտ է եւ պիտի ֆաշալեթներ որ երիտասարդներ, որոնք հաղորդակից են նոր սերունդի ակնկալութիւններուն եւ ձգտումներուն, իրենց մտահոգիւցները եւ ժամանակակից գործելակերպը ներմուծեն մեր միութեան աշխատանքներու լայն դաշտէն ներս, ստանձնելով համապատասխան դերեր վարչական թէ պաշտօնէութեան մակարդակներու վրայ:

Միութիւնը եւ մենք ազգովին, կը գտնուինք նոր ու վիթխարի հրամայականներու դիմաց, որոնք աշխատանքի նոր եւ հետաքրքրական ասպարէզներ կը պարգեն մեր սոցիէ: Մեծագոյն պատիւ եւ առանձնաշնորհում կը սեպեմ մեր ազգին համար հանգրուանային այս ժամանակներուն եւ համաշխարհայնական աննախընթաց հոլովոյթներու այս դարուն, Հայկական Մեծագոյն Կազմակերպութեան Նախագահի պաշտօնը վարելու պատասխանատուութիւնը: Պատուուած կը զգամ յատկապէս գործակցութեամբ երիտասարդ, կարող ու գործարար Կեդրոնական Վարչական Ժողովի անձնակազմին եւ Խնամակալ պատկանելի Ժողովի ազնուական անդամներուն:

Մեր Ընդհանուր Միութեան հիմնական յատկանիշը անկասկած, անոր վայելած ամբողջական եւ անխախտելի վստահութիւնն է, հաւատաւոր եւ առատածնին բարեբարներով եւ նուիրատուներով, գործունեայ եւ նուիրեալ անդամակցութեամբ եւ աշխարհատարած համակիրներու խիտ շարքերով:

Մեր ձգտումն է, եւ կը հաւատանք, որ հայ ժողովուրդի բարօրութեան ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.իութեան ազգանուէր ծառայութեան պանծալի անցեալը եւ ժամանակին հետ ֆայլ պահող նոյնքան փայլուն եւ հպարտալի ներկայ գործընթացը, պիտի շարունակէ անի ու շատ անելի արդիւնատուութեամբ պիտի շարունակուի յաջորդող սերունդներուն կողմէ:



Պերն Սեդրակեան
Նախագահ



Նիւթական Տեղեկագիր 2008 – 2009

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՅՔ	2009	2008
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մէջ պատրաստ	\$ 9,872,346	\$ 6,445,048
Արժեթուղթեր	224,442,973 (*)	211,051,275 (*)
Գանձելի աւանդներ/հաշիւներ	16,101,443	2,820,649
Գանձելի տոկոս	635,716	1,813,987
Գումար Ընթացիկ Գոյքի	251,052,478	222,130,959
Անշարժ Կալուածներ	79,001,006	78,937,313
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր	1,978,685	1,831,111
Գումար Գոյքի	332,032,169	302,899,383
ՊԱՐՏԱԿԱՆՔ ԵՒ ԶՈՒՏ ԳՈՅՔ		
Պարտականք		
Վնարելի հաշիւներ	\$5,228,763	\$4,295,539
Վնարելի պարտաթուղթեր	654,862	731,535
Գումար Պարտականքի	5,883,625	5,027,074
Զուտ Գոյք		
Ոչ պայմանաւորեալ	51,889,744	48,691,378
Առժամապէս պայմանաւորեալ	32,557,896	34,860,070
Մշտապէս Պայմանաւորեալ (Հիմնադրամներ)	241,700,904	214,320,861
Գումար Զուտ Գոյքի	326,148,544	297,872,309
Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի	332,032,169	302,899,383

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝
Նուիրատուութիւններ
Անդամավճարներ
Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր

Հասոյթ՝

Շահաբաժին եւ տոկոս
Կալուածային
Դպրոցական

ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ վարչական Ծախք
Յայտագիրներ՝
Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք
Դրամահաւաքի Ծախք
Դրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

Գումար Յայտագիրներու եւ Վարչական Ծախքի

Յաւելում (Նուագում) Ելեմուտքի

Միջ-յատկագումարային փոխանցում

Յաւելում (Նուագում) Զուտ Գոյքի

Զուտ Գոյք՝ տարեսկիզբին

Զուտ Գոյք՝ տարեվերջին

(*)Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/2009-ին եւ 12/31/2008-ին, որոնց սակարանային արժէքը յաշորդարար Ամերիկեան Տոլարով \$231,405,367 եւ \$185,970,367 են:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Տեղեկագիր
10-Տարուայ Բաղդատական Գումարներու

	2009	%*	2008	%**	1998
Ընդհ. Գոյք	\$332,032,169	9.61%	\$302,899,383	42.39%	\$212,714,355
Ընդհ. Մուտք	63,994,009	68.56%	37,965,686	<3.78>%	39,460,402
Ընդհ. Ելք	35,717,774	<6.99>%	38,403,096	43.18%	26,819,732

*Միամեայ % Յաւելում (Նուագում) **10-ամեայ % Յաւելում (Նուագում)

Ամերիկեան Տոլարով

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն

ԵԼԵԻՄՈՒՏՔ

Ա.Ո Դեկտեմբեր 31, 2009

Ա.Ո Դեկտեմբեր 31, 2008

Ոչ Պայմանաւորեալ	Առժամապէս Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար	Ոչ Պայմանաւորեալ	Առժամապէս Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար
\$ 1,560,579	\$ 8,736,071	\$ 28,597,841	\$ 38,894,491	\$ 3,342,098	\$ 8,207,066	\$ 13,043,572	\$ 24,592,736
320,444	-	-	320,444	327,736	-	-	327,736
4,328,453	20,445	49,413	4,398,311	4,735,011	26,997	-	4,762,008
6,209,476	8,756,516	28,647,254	43,613,246	8,404,845	8,234,063	13,043,572	29,682,480
5,894,218	-	-	5,894,218	(5,811,753)	-	-	(5,811,753)
2,198,874	11,502	-	2,210,376	2,155,298	17,956	-	2,173,254
12,276,169	-	-	12,276,169	11,921,705	-	-	11,921,705
20,369,261	11,502	-	20,380,763	8,265,250	17,956	-	8,283,206
26,578,737	8,768,018	28,647,254	63,994,009	16,670,095	8,252,019	13,043,572	37,965,686
8,584,987	(8,584,987)	-	-	8,727,623	(8,727,623)	-	-
35,163,724	183,031	28,647,254	63,994,009	25,397,718	(475,604)	13,043,572	37,965,686
18,947,504	-	-	18,947,504	19,038,692	-	-	19,038,692
8,905,988	-	-	8,905,988	10,511,897	-	-	10,511,897
2,113,152	-	-	2,113,152	2,812,517	-	-	2,812,517
3,143,586	-	-	3,143,586	2,171,181	-	-	2,171,181
33,110,230	-	-	33,110,230	34,574,287	-	-	34,574,287
3,122,469	-	-	3,122,469	3,477,772	-	-	3,477,772
230,000	-	-	230,000	222,000	-	-	222,000
(744,925)	-	-	(744,925)	129,037	-	-	129,037
2,607,544	-	-	2,607,544	3,828,809	-	-	3,828,809
35,717,774	-	-	35,717,774	38,403,096	-	-	38,403,096
(554,050)	183,031	28,647,254	28,276,235	(13,005,378)	(475,604)	13,043,572	(437,410)
3,752,416	(2,485,205)	(1,267,211)	-	(651,476)	(1,852,288)	2,503,764	-
3,198,366	(2,302,174)	27,380,043	28,276,235	(13,656,854)	(2,327,892)	15,547,336	(437,410)
48,691,378	34,860,070	214,320,861	297,872,309	62,348,232	37,187,962	198,773,525	298,309,719
\$51,889,744	\$32,557,896	\$241,700,904	\$326,148,544	\$48,691,378	\$34,860,070	\$214,320,861	\$297,872,309

ՀԱՅԱՍՏԱՆ / ՂԱՐԱՐԱՂ



Հ.Բ.Ը.Միության հովանավորությամբ հիմնուած եւ անոր օժանդակութիւնը վայելող Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Փարամագ Աւետիսեան նորակառոյց շէնքին բացումը կատարուեցաւ Նոյեմբեր 1, 2008ին:

Հայրենիքին սատարելը Հ.Բ.Ը.Միության առաքելութեան Հանկուհեմարերէն մին կը կազմէ: 1906-ին իր հիմնադրութենէն առդին, Հ.Բ.Ը.Մ.-ը կենսական օգնութիւն տրամադրած է Հայրենիքին: Այսօր, գործադրուող բազմաթիւ ծրագիրներ եւ յայտագիրներ կը նպաստեն Հայաստանի եւ Արցախի զօրացման եւ համայն հայութեան բարօր ապագայի ապահովումին:



Պայմանանշաններ

Երկիր	Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին	Բարեսիրական Ծրագիր Մշակութային Ծրագիր Բժշկական Սպասարկութիւն Երիտասարդական Գործունէութիւն եւ Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր
●	Կեդրոն / Գրասենեակ Վարժարան / Համալսարան Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)	
+	Սր. Էջմիածնի հետ գործակցարար	



Հայաստանի Ամերիկեան Համալսարանը Մայիս 2009ին կազմակերպեց արտասահմանեան ամերիկեան համալսարաններու երկու խորհրդաժողովներ՝ Ամերիկեան Գոլէններու եւ Համալսարաններու Միութեան Տարեկան համագումարը եւ Ակադեմական Գրադարաններու Ամերիկեան Միջազգային Միութեան համագումարը, 2009ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի Ամերիկեան Համալսարանը ուսումնական որակի խստապահանջութեամբ կը շարունակէ պահպանել իր յատուկ դիրքը Հայաստանի բարձրագոյն կրթութեան շրջանակներուն մէջ: Տարեկան շուրջ 400 ուսանողներ կը հետեւին ՀԱՀ-ի երկամեայ կրթական ծրագրին՝ մագիստրոսի աստիճանի արժանանալով Առեւտրական Վարչագիտութեան, Բնութեան եւ Միջավայրի Պահպանումի Գիտութիւններու, Հարտարագիտութեան, Իրաւագիտութեան, Քաղաքագիտութեան, Միջազգային Գործառնութեանց, Հանրային Առողջապահութեան եւ Համակարգչային Գիտութեան ցիւղերու մէջ:

Նոյեմբեր 2008ին բացումը կատարուեցաւ ՀԱՀ-ի նորակառոյց Փարամազ Աւետիսեան շէնքին: Հինգ յարկանի արդիական կառոյցը 30,000 Բ/մ տարածով աւելցուց համալսարանին արդէն իսկ գոյութիւն ունեցող յարմարութիւնները, որոնք կը ներառեն դասասենեակներ, լսարաններ, գրասենեակներ, տարրալուծարաններ, հետազոտութեանց, համակարգչային եւ համացանցային կեդրոններ, լսատեսողական ժողովներու համար նախատեսուած սրահ, մտքասրահ եւ ցուցասրահ մը, ինչպէս նաեւ սրահարան եւ գրատուն մը: Նորակառոյց շէնքը նախագծած է Լոս Անճելիւսէն Altoon & Porter նարտարապետական ընկերութիւնը, որ կենսամիջավայրի քննարկողի նկատառումով յարաշնչեմ եւ նորարարական լուծումներ տուած է մասնաշէնքի արտաքին թէ ներքին կառոյցին:

Մարտ 2009ին ՀԱՀ-ը գործընկերութեան Յուշագիր մը ստորագրեց Համաշխարհային Դրամատան Երեւանի Գրասենեակին հետ: Համագործակցութիւնը կը միտի համալսարանի Փափագեան գրադարանին մէջ Գիտելիքի Զարգացումի Կեդրոնի մը ստեղծումին, որ համատեղ ծրագրումով ու միացեալ ձեռնարկներով պիտի նպաստէ գիտելիքներու տարածումին, ուսումնասիրութեանց եւ զարգացումի ասպարէզին մէջ կարողութիւններու մշակումին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻՔ ՆՈՒԱԳԱՒՈՒՄԲ

Գիտակից կատարողական արուեստի կարեւորութեան, Հ.Բ.Ը.Միութիւնը 1992էն ի վեր կը հովանաւորէ 110

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՀՈՎԱՆԱԻՈՐԱԾ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՂԱՐԱԲԱՂ
Հայաստանի Ամերիկեան Համալսարան	Հայաստանի Ֆիլհարմոնիք Նուագախումբ	Ղարաբաղի Սենեկային Նուագախումբ
Հայորդեաց Կեդրոններ (3)	Տարեցներու Ճաշարահներ (4)	Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիր
Գերազնային Հետազոտութիւններու Կեդրոն	Հայկական Համացանցային Գոլէն	
Ճատրակի Համադպրոցական Ողիմպիադ	Հայ Կին Յղի Կանանց Աջակցութեան Կեդրոններ (3)	

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ
 Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Սկաուտական Ծրագրում Երեւանի Երիտասարդ Արեւստավարժներ
ՍՓԻՒՌՔԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ
 Անդրանիկ Սկաուտական Ճամբար «Յայտնաբերէ Հայաստանը» Դաստիարակչական Այց Հայաստան Երեւանի Ամառնային Ասպարէզային Փորձառութեան Ծրագիր

- ԳԼԽԱՒՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ**
- Սր. Էջմիածին - Հոգեւորականներու քնակարաններ
 - Սր. Էջմիածին - Հայաստանի Ծրագիրներ
 - Սր. Էջմիածին - Թանգարան
 - Սր. Էջմիածին - Հայորդեաց Կեդրոն
 - Սր. Էջմիածին - Ծառայութեանց Կեդրոն
 - Սր. Էջմիածին - Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հոգեւոր Կրթութեան Կեդրոն
 - Սր. Էջմիածին - Մայր Տանար
 - Սր. Էջմիածին - Մատուռի Կառուցում
 - Սր. Էջմիածին - Ծերանոց
 - Սր. Էջմիածին - Ընծայարան
 - Սր. Աննա Եկեղեցի
 - Սր. Ներսէս Հիւանդանոց
 - Վանաձորի Հայորդեաց Կեդրոն
 - Վազգէնեան Ընծայարան

ՅԱՏՈՒԿ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ
 Արցախի Ամերիկացի Բարեկամներ Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան Գիւմրիի Որբանոց «Լեւոն Զ. Սիրմէլեան» Տպագրատուն «Մերոնք» Հեռատեսիլի Յայտագիր «Օտար, Ամայի Ճամբէլի Վրայ» Հեռատեսիլի Յայտագիր Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիա Նուպարաշէն Մշակութային Կեդրոն Հայաստանի Ֆրանսական Համալսարան Հայաստանի Գրողներու Միութիւն Զանգակաձոր Հրատարակութիւններ

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՑԻՆ ՆԵՐԳՈՒՄՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ
 Արթիկ, Շիրակի Մարզ - թիւ 1 եւ 2 մանկապարտէզներու ջեռուցում Դանդ, Լոռիի Մարզ - Մշակութային Կեդրոնի նորոգութիւն Ելփին, Վայոց Ձորի Մարզ - Մշակութային Կեդրոնի նորոգութիւն Գոմք, Վայոց Ձորի Մարզ - Համայնֆային Կեդրոնի տանիքի նորոգութիւն Գիւմրի, Շիրակի Մարզ - Ժողովրդական Հարտարապետութեան եւ Մերֆուրովի Թանգարաններու ջեռուցում Թումանեան, Լոռիի Մարզ - Համայնֆային Կեդրոն Մարալիկ, Շիրակի Մարզ - Քաղաքի հանրային պարտէզի բարելաւում Մեղրի, Սիւնիքի Մարզ - Կոյուղիի նորոգութիւն Նորաշէն, Արարատի Մարզ - Գլխաւոր նորոգութիւն Րինտ, Վայոց Ձորի Մարզ - Համայնֆային Կեդրոնի տանիքի նորոգութիւն Սեբս, Վայոց Ձորի Մարզ - Համայնֆային Կեդրոնի տանիքի նորոգութիւն Ծեմգաւիթ, Երեւան - Մանկապարտէզ թիւ 7 Ուջան, Արագածոտնի Մարզ - Մանկապարտէզ Վերնաշէն, Վայոց Ձորի Մարզ - Մշակութային Կեդրոնի տանիքի նորոգութիւն Երեւան - Արամ Արքայազանի Թանգարանի նորոգութիւն Երեւան - Թիւ 37 դպրոցի ջեռուցում Զորաբար, Գեղարքունիքի Մարզ - Մշակութային Կեդրոնի տանիքի նորոգութիւն

արուեստագետները բաղկացած Հայաստանի Ֆիլիարմոնիկ Նուագախումբը: Տարեկան յատկացումներ կը կատարուին շաբաթական համերգներ կազմակերպելու, երաժշտական նոր գործիքներ ձեռք բերելու, վարչական ծախսերու, յաւելավնարներու, փառատօներու եւ հիւր երաժիշտներու ելոյթներու կազմակերպման համար: ՀՖՆ-ը ելոյթներ ունեցած է Աւստրիոյ, Գանատայի, Կիպրոսի, Չեխիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Յունաստանի, Իրանի, Լիբանանի, Փորթուգալի, Ռուսաստանի, Սլոնիոյ, Թուրքիոյ, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ: Ցարդ տպագրուած են նուագախումբին երաժշտացանկը ներկայացնող աւելի քան 50 խտասալիկներ:



Էտուարտ Թոփչեան կը ղեկավարէ Հայաստանի Ֆիլիարմոնիկ Նուագախումբը:

Սեպտեմբեր 2009ին տեղի ունեցաւ Երեւանի 3-րդ Միջազգային երաժշտական Փառատօնը, որ Հայաստանի տարեկան մշակութային կեանքի կարեւորագոյն իրադարձութիւններէն մէկն է: Փառատօնը կը ղեկավարէին ՀՖՆ-ի Գեղարուեստական Տնօրէն եւ Գլխաւոր Ղեկավար Էտուարտ Թոփչեանը եւ ջութակահար Ալեքսանտր Զաուրեանը, Մեծն Բրիտանիայէն: Ամբողջ ամիս մը տեւած փառատօնի ընթացքին հիւրընկալուելով ՀՖՆ-ի կողմէ ելոյթներ ունեցան միջազգային նանաչումի տիրացած երաժիշտներ՝ Ֆրանուա Ֆրետէրիֆ Կի (Ֆրանսա), ջութակահար Մասսիմօ Գարթա (Իտալիա), թաւջութակահարուհի Նաթալիա Կուբան (Ռուսիա), թենոր Ճիւզեփէ Ճիաֆումինի (Իտալիա), աւագջութակահար Գիմ Գազգաշեան (ԱՄՆ), դաշնակարուհի Աշլի Ուսա (Մեծն Բրիտանիա), աւագսարինգահար Ուօլֆկանկ Մէլեր (Գերմանիա), ջութակահար Տայշին Գաշիմօթօ (Ճարոն) եւ ուրիշներ:

ՀԱՅՈՐԴԵԱՑ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Փետրուար 2003ին, Հ.Բ.Ը.Մ.ը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, համատեղելով իրենց ոյժերը, երեք Հայորդեաց Կեդրոններ հիմնեցին Երեւանի մէջ: Այդ կեդրոնները համակարգիչի, ձեռային աշխատանքներու, պարի, մարմնամարզութեան, պատմութեան, լեզուի եւ երաժշտութեան արտադասարանային եւ ամառնային ծրագիրներ կը վարեն երեխաներու համար: Հայորդեաց երեք կեդրոններն ալ ունին մատուո, ուր շաբաթական դրութեամբ տեղի կ'ունենան եկեղեցական արարողութիւններ եւ Աստուածաշունչի ընթերցումներ:



Երեխաներ ձեռարուեստ եւ արհեստ կը սորվին Հ.Բ.Ը.Մ.-ի Հայորդեաց Կեդրոններէն մէկէն ներս:

Այսօր, շուրջ 4000 աշակերտներ, 6էն 21 տարեկան, կը յաճախեն Երեւանի Հայորդեաց Կեդրոնները: 300 հոգինոց ուսուցչական եւ վարչական անձնակազմը կը վարէ կեդրոններու աշխատանքը: Անցնող տարիներուն Հայորդեաց Կեդրոններու կատարողական արուեստներու խումբերը ելոյթներ տուած են Միացեալ Նահանգներու, Գանատայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուրուկուէյի, Պրագիլի եւ Լեհաստանի մէջ՝ ցուցադրելով իրենց տաղանդը եւ շնորհները մշակութային տարբեր ձեռնարկներու ընթացքին, որոնց ներկայ գտնուած են բազմաճապար հանդիսատեսներ: Անցնող տարիներուն վերոյիշեալ կեդրոնները հիմնովին նորոգուեցան եւ կահաւորուեցան: Հ.Բ.Ը.Մ.-ի Տարեցներու չորս ճաշարահներէն երեքը կը գործեն Երեւանի Արաբկիրի, Մալաթիայի եւ Նորֆի Հայորդեաց կեդրոններէն ներս:



Ղարաբաղի Սենեկային Նուագախումբի 5-Ամեակին նուիրուած ելոյթը տեղի ունեցաւ 16 Հոկտեմբեր 2009ին:

ՂԱՐԱԲԱՂԻ ՍԵՆԵԿԱՑԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Հ.Բ.Ը.Միութիւնը, ընդառաջելով Ղարաբաղի կառավարութեան խնդրանքին, 2004էն ի վեր կը ֆինանսաւորէ 23 հոգինոց Ղարաբաղի Սենեկային Նուագախումբին գործունէութիւնը: Նուագախումբը նախապէս կը գործէր Ստեփանակերտի երաժշտական Գոլէճին մէջ, իսկ այսօր արդէն հանգրուանած է մշակութային նորակառոյց կեդրոնին մէջ: Նուագախումբը ելոյթներ կ'ունենայ միշտ լեցուն դահլիճի, յաճախ ալ ոտֆի մնացած երաժշտասէր հասարակութեան առջեւ: Ան կ'ենտուակութիւն կ'ապահովէ Ղարաբաղի մշակութային կեանքին:



Արցախի Նորաշէն գիւղի Բարեշէն բաղամասէն տեսարան մը, կառուցուած՝ Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի հովանաւորութեամբ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիրին նպատակն է վերականգնել եւ վերաբնակեցնել 1988-1994 տարիներուն Ատրպէյճանի հետ պատերազմին հետեւանձնով ֆանդուած եւ լքուած հայկական գիւղերը: 2002ին, Հ.Բ.Ը.Մ.ի

Ֆրանսայի մասնաճյուղին նախաձեռնություններ սկիզբ առած Հաղործի շրջանի Նորաշեն գիւղի վերակառուցումը շուտով վերածուեցաւ Միութեան վերաբնակեցումի ընդհանուր ծրագրի մը: Ծատ կարն ժամանակուան մը ընթացքին կառուցուեցան 22 տուններ եւ մանկապարտէզ մը: Գիւղին մէջ շուտով կառուցուեցաւ նաեւ դարմանատուն եւ 80 աշակերտներու համար նախատեսուած դպրոց մը: Դպրոցը ունի 8 դասարան, հանդիսասրահ եւ համակարգչային սենեակ մը:

Հ.Բ.Ը.Միութեան Լոս Անճելոսի, Լոնտոնի, Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Սիտնիի մասնաճյուղերը իրենց մասնակցութիւնը ունեցան վերակառուցումի այս ծրագրին մէջ: Վերջերս աւարտեցաւ Նորաշեն գիւղի Բարեշեն եւ Ջրակն թաղամասերու 13 տուներու կառուցումը: Այսօր, Ղարաբաղի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի կառուցած 35 տուներուն մէջ կ'ապրին շուրջ 150 քնակիչներ, որոնց մաս կը կազմեն նաեւ երիտասարդ ընտանիքներ:



Տարեցներու ճաշարահներէն օգտուող հայրենակիցներ:

ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՀԱՇՎԱՍՐԱՀՆԵՐ

Հայաստանի անկախութենէն ի վեր, Հ.Բ.Ը.Միութիւնը կը հովանաւորէ Տարեցներու ճաշարահները, օրական տա՛մ քաշ մատակարարելով 1200 տարեց թոշակառուներու եւ որբերու: Այսօր, Հ.Բ.Ը.Միութիւնը կը հովանաւորէ չորս քաշարահներ, որոնցմէ երեքը կը գործեն Հայորդեաց Կեդրոններու մէջ՝ սպասարկելով տեղի քնակչութեան: Ճաշարածիները միշտ առատօրէն կը տրամադրուին մասնակցողներուն, որոնք կրնան նաեւ քաշարածիներ տանիլ տուն եւ բաժնեկցիլ ընտանիքի այլ անդամներու եւ բարեկամներու հետ: Ցատուկ կարգադրութեամբ մը քաշ կը հասցուի նաեւ անոնց որոնք դժուարութիւն ունին անձամբ կեդրոն գալու:



Տոճ. Հմայակ Սիսակեան գերօայնային սարքով կը բնէ հիւանդ մը:

ԳԵՐՁԱՅՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱԽՏԱՀԱՆԱԶՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

Գերօայնային Հետազոտութիւններու Կեդրոնը, Հ.Բ.Ը.Մ.-ի կողմէ հիմնուեցաւ 1996ին՝ Թովմաս Ճէֆրըսըն Գերօայնային Հետազոտութիւններու եւ Ուսուցման Համալսարանին հետ համագործակցաբար, Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ, Ճէֆրըսըն Համալսարանի Ֆիլատելիֆոյ հիւանդանոցի Գերօայնային բաժնի դասախօս Փրոֆ. Լեւոն Նազարեանի տնօրինութեան ներքոյ: 2002ին, Հ.Բ.Ը.Մ.-ը եւ Ճէֆրըսըն Համալսարանի հիւանդանոցը Գերօայնային Հետազոտութիւններու ուսուցման եւ վերապատրաստումի նոր կեդրոն մը հիմնեցին Երեւանի Պետական Բժշկական Համալսարանի հիւանդանոցին մէջ: Տարիներու ընթացքին, Գերօայնային Կեդրոնը աւելի քան 20 գերօայնային սարքեր նուիրեց նաեւ Հայաստանի, Ղարաբաղի եւ Ջաւայիի հիւանդանոցներուն:



Հայաստանի Ճատրակի Միութեան Փոխ-նախագահ Սմբատ Լպուտեան (հեռու աջին), Հայաստանի Միջ-դպրոցական Ողիմպիադի ախոյեաններուն հետ: Ճատրակի ողիմպիադը եզրափակուեցաւ 6 Մայիս 2009ին, Շուշիի մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՈՒԼԷՃ

Հ.Բ.Ը.Մ.-ի Հայկական Համացանցային Գուլէճը հայկական առաջին համացանցային ծրագիրն է, որուն յատուկ նպատակն է տեղեկատուական ժամանակակից միջոցներով հայկական կրթութիւնը հասանելի դարձնել բոլորին եւ ամենուր: Երկամեայ այս Տեղեկագրի Կրթութեան բաժինը հանգամանօրէն կ'անդրադառնայ Համացանցային Գուլէճի ծրագրին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՐԱԿԻ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԴ

Հ.Բ.Ը.Միութիւնը, Հայաստանի Ճատրակի Միութեան հետ գործակցաբար, 2008էն ի վեր կը հովանաւորէ Հայաստանի Ճատրակի Համադպրոցական Ողիմպիադը: Կարեւոր այս նախաձեռնութիւնը, որ կը վայելէ նաեւ Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան հովանաւորութիւնը, կը նպաստէ շուրջ 6,000 դպրոցականներու մօտ ճատրակի հանդէպ հետաքրքրութեան անին, ինչպէս նաեւ կը յայտնաբերէ ապագայի ախոյեան շնորհալի մարզիկներ: Ողիմպիադը միջոց մըն է նաեւ պահպանելու Հայաստանի յառաջատար դիրքերը ճատրակի համաշխարհային մրցումներուն:



Համաշխարհային Դրամատան ներկայացուցիչ Ռուտոլֆ Թրեֆէրս, Հ.Բ.Ը.Մի Նախագահ Պերն Սեդրակեան եւ Նուպարաշէնի Բաղաճապետ Միքի Յովհաննիսեան քացումը կը կատարեն Նուպարաշէնի մարզա-մշակութային Կեդրոնին, 25 Մարտ 2009ին:



Ստուբֆիլտ, Միչիկընի Ալեք և Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտներ և ուսուցչական կազմը նկարուած վարժարանի նորակառոյց շէնհին առջեւ, որուն բացումը կատարուեցաւ 8 Սեպտեմբեր 2009ին:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը յանախ կը զուգորդուի դպրոցներու և կրթական գործունէութեան հետ, որովհետեւ անցնող տասնամեակներուն, սկսեալ իր հիմնադրութենէն իսկ, ան իր նախաձեռնութիւններով և ստեղծած միջոցառումներով, նպաստած է ազգային մշակութի պահպանումին և բարձրագոյն ուսման առիթներ ընձեռնած է տասնեակ հազարաւոր ուսանողներու: Այս նախաձեռնութիւնները օգնած են մեր մշակութային հարստութիւններու ծանօթացումին և տարածման, ինչպէս նաեւ յաջորդական սերունդներու մօտ ազգային ինքնագիտակցութեան և հպարտութեան մշակումին:

Շատեր Հ.Բ.Ը.Մ.ի կրթական դերը կը պատկերացնեն ւսանողական ուսումնական հաստատութիւններու և միջոցառումներու նեղ հասկացողութեամբ: Իրականութիւնը այն է, որ այդ դերը անցեալ տարիներուն ընդարձակուած է և կ'ընդգրկէ շարք մը ծրագիրներ, որոնք դասական դպրոցներու սահմաններէն դուրս, կը հասնին նոր սերունդի լայն շրջանակներուն և 21-րդ դարու հոլովոյթին հետ զարգացող գաղութներու կարիքներուն և պահանջներուն, սփիւռքի և հայրենիքի մէջ, շղկապելով երկուքը: Այս տեղեկագիրը անցնող երկու տարիներու գործունէութիւնը ամփոփելով, նաեւ ընդհանուր պատկերացում մը կու տայ Միութեան կրթական համակարգին մասին:

Հ.Բ.Ը.Միութեան կրթական համակարգի գործունէութիւնը կ'ընթանայ գլխաւոր երեք ուղղութիւններով.

1. Հ.Բ.Ը.Միութեան դպրոցներ աշխարհի տարածքին
2. Բարձրագոյն ուսման կրթաթոշակներ
3. Լայն ընդգրկում ունեցող միջոցառումներ, որոնք կը հասնին հայկական ւսանողական կառոյցներէն դուրս գտնուող շրջանակներուն և նոր սերունդի լայն խաւերուն

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Հ.Բ.Ը.Միութեան դպրոցներու ցանցը կ'ընդգրկէ նախակրթական և երկրորդական ամենօրեայ վարժարաններ, ինչպէս նաեւ միօրեայ կամ շաբաթօրեայ միջոցառումներ և արտադասարանային մշակութային գործունէութիւններ, որոնց թիւը 30-ը կ'անցնի և որոնց կը մասնակցին շուրջ 5500 աշակերտներ: Ներկայիս գործող դպրոցները, որոնք կը տարբերին իրենց աշխարհագրական դիրքով և գոյառումի թուականներով, շուրջ 80 տարիներէ ի վեր ազգանուէր ծառայութիւն կը կատարեն:

Միութեան դպրոցները տարածուած են Արժանքի, Աւստրալիոյ, Գանատայի, Յունաստանի, Իրանի, Լիբանանի, Սուրիոյ, Ուրուկուէյի և Միացեալ Նահանգներու մէջ: Հ.Բ.Ը.Մ.ի կրթական Բաժնի Տնօրէնութիւնը կը համակարգէ դպրոցներու կրթական և կազմակերպչական աշխատանքները, ինչպէս նաեւ ուսուցչակազմերու որակաւորումի և անոնց միջեւ կրթական ծրագիրներու և դասաւանդման միջոցներու և փորձառութեաց փոխանակումը:

Սփիւռքի հոլովոյթը և աշխարհագրական վերադասաւորումը, քաղաքացիական նոր պատկանելիութիւններով, ընկերային տնտեսական նոր իրականութիւններ ստեղծած են: Ծնողներու փոխուող ակնկալութիւնները և անոնց ունեցած կրթական այլընտրանքները, որոնք մեր համայնքային շրջապատէն դուրս կը գտնուին, նոր հրամայականներ կը ներկայացնեն: Փոխուող պայմանները կ'ենթադրեն նոր սերունդի շրջապատին, առօրեային, ակնկալութիւններուն և հետաքրքրութիւններուն համապատասխան հայեցի դաստիարակութեան նոր միջոցառումներ: Այս բոլորին առընթեր, տնտեսական իրադրութիւնը, աշակերտութեան թիւի նուազումն ու պիտեմական դժուարութիւնները, նւթական ծանր պարտաւորութիւններ և վերակազմակերպչական խնդիրներ կը ներկայացնեն Միութեան համար: Այս ուղղութեամբ տեղական կրթական մարմինները, Միութեան կրթական Բաժնին հետ համախորհուրդ, աշխատանք կը

տանին եւ նոր միջոցառումներ կը փորձեն, իրենց շրջանակի նիւթական կարելիութիւններէն եւ գաղութի պահանջներէն մեկնելով: Մինչ այդ, Կեդրոնական Վարչական ժողովը կը շարունակէ տարեկան շուրջ 3 միլիոն ամերիկեան տոլարի հասնող յատկացումներով հասասարակչոն ղարոցներու պիտուէները, որոնց տարեկան ընդհանուր գործառնութիւնը կը հասնի շուրջ 20 միլիոնի:

2008-2009 Տարիներու Տուեալներ

Նախակրթական Դպրոցներ	7
Երկրորդական Դպրոցներ	9
Միօրեայ կամ Շաբաթօրեայ Դպրոցներ	15+
Աշակերտութեան Թիւ	5500
Ընդհանուր Նիւթական Գործառնութիւն	\$40 միլիոն
Կեդրոնական Վարչական ժողովի Օժանդակութիւն	\$6 միլիոն
Երկրորդականէ շրջանաւարտներ	675



Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան, Տիբրոյթ, ԱՄՆ

2009 տարեշրջանը Հ.Բ.Ը.Միութեան կրթական համակարգին համար յատկանշուեցաւ երկու կարեւոր իրադարձութիւններով: Առաջինը՝ Միշիկընի Սաութֆիլտի Ալեք՝ եւ Մարի Մանուկեան Վարժարանի երկրորդական բաժնի արդիական շէնքի կառոյցն էր, որ իրականացաւ Տէր. Լուիզ Սիմոնի եւ Տէր. եւ Տիկին Րիչըրտ Մանուկեաններու 5.5 միլիոն ամերիկեան տոլարի առատաձեռն նուիրատուութեամբ:

Երկրորդ իրադարձութիւնը Տէր. եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններու Հ.Բ.Ը.Միութեան կատարած 11 միլիոն ամերիկեան տոլարի նուիրատուութիւնն էր, որ պիտի նպաստէ Հ.Բ.Ը.Մ.ի Փաստօրինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի կառոյցին եւ կրթական միջոցներու բարեկարգումին, զայն բարձրացնելով Հարաւային Գալիֆորնիոյ լաւագոյն երկրորդական դպրոցներու մակարդակին:



Մարի Մանուկեան Վարժարան, Պուէնոս Այրէս, Արժաթին

Հ.Բ.Ը.Միութեան ԴՊՐՈՑՆԵՐ

ԱՐԺԱՆԹԻՆ Պուէնոս Այրէս	Մարի Մանուկեան Վարժարան (Pre K-12)
ԱԻՍՏՐԱԼԻԱ Սիտնի	Ալեքսանտր Նախակրթարան (K-6) Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց
ՊՈՒԼԿԱՐԻԱ Տոպրիչ Հասֆոլո Փլովտիւ Րուսէ Սիլիպթրա Սիվլըն Եամպոլ	Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց
ԳԱՆԱՏԱ Մոնթրէալ	Արմէն Քէպլէֆ-Ալեք Մանուկեան Վարժարան (Pre K-8)
Թորոնթօ	Դանիէլ եւ Ալիս Զարուկեան Վարժարան (Pre K-6)
ՖՐԱՆՍԱ Փարիզ Լիոն Վիէն	Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց Շաբաթօրեայ Դպրոց
ՅՈՒՆԱՍՏԱՆ Աթէնք	Արթաքի Գալիպեան Վարժարան (Pre K-6)
ԻՐԱՆ Թեհրան	Մարի Մանուկեան Վարժարան (1-5) Նուարդ Կիլպէնկեան Վարժարան (9-12)
ԻՐԱՔ Պաղտատ	Բուրաստան Ուրբաթօրեայ Վարժարան
ԼԻԲԱՆԱՆ Պէյրութ	Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան (Pre K-6) Դարուհի-Յովակիմեան Վարժարան (7-12) Լեւոն Կ. Նազարեան Վարժարան (Pre K-6)
ՍՈՒՐԻԱ Հալէպ	Լազար Նանարեան-Գալուստ Կիլպէնկեան Վարժարան (Pre K-12)
Դամասկոս Գամիշլի	Կիլլապի Կիլպէնկեան Վարժարան (Pre K-6) Շաբաթօրեայ Դպրոց
ՈՒՐՈՒԿՈՒԷՑ Մոնթէվիտէօ	Նուպարեան-Մանուկեան Վարժարան (Pre K-12)
ԱՄՆ Գալիֆորնիա Գանուկ Փարթ Քոնսա Մեսա Փասատինա	Մանուկեան-Տեմիրեան Վարժարան (Pre K-12) Օրէնն Քատնթի Շաբաթօրեայ Դպրոց Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան (9-12)
Միշիկըն Տիբրոյթ	Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան (Pre K-12)
Իլլինոյ Շիքագօ	Սիսակ Յ. Վարժապետեան Շաբաթօրեայ Դպրոց
Օհայօ Գիլվըրնտ	Շաբաթօրեայ Դպրոց

Հ.Բ.Ը.Մ.Ի ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Շնորհիւ առատաձեռն նուիրատուներու ստեղծած հիմնադրամներուն, անցնող ամիսի քան 80 տարիներու ընթացքին Հ.Բ.Ը.Մ.Ի Կրթաթոշակներու Ծրագիրը սատարած է առաջնակարգ համալսարաններու մէջ արձանագրուած հազարաւոր խոստմնալի հայ ուսանողներու բարձրագոյն կրթութեան: Արդարեւ, Հ.Բ.Ը.Մ.Ի կրթաթոշակներու նոր ծրագիրը, նախապատուութիւնը տալով կարգ մը մասնագիտութիւններու, մանաւանդ կատարողական արուեստներու եւ հոգեւոր ծառայութեան կոչուող անձերու պատրաստութեան, առաւել նպատակասեւեռ ծրագրի մը վերածուեցաւ: Կրթաթոշակներու նոր ծրագիրը նիւթական օգնութիւն տրամադրեց շախարհի բոլոր կողմերէն հայ ուսանողներու ամիս լայն շրջանակի մը:

Հ.Բ.Ը.Մ.Ի կրթաթոշակներու ծրագիրը 2009էն ի վեր փոխած է իր անցեալին լայնօրէն կիրարկուած Մագիստրոսի ուսանողներուն փոխատուութիւններ տրամադրելու մօտեցումը, այժմ արդէն ուղղակի կրթաթոշակներ տրամադրելով անոնց: Աւելին, նոր մօտեցումին իբր արդիւնք, ստեղծուած են հինգ տարբեր կրթաթոշակներու տեսակներ՝ իւրաքանչիւրը յատուկ դիմումագիրներով, չափանիշներով, պահանջներով, ինչպէս նաեւ պայմանաժամերով:

- Հ.Բ.Ը.Մ.Ի Միացեալ Նահանգներու Համալսարանական Մասնագիտական Կրթաթոշակ
- Հ.Բ.Ը.Մ.Ի Կատարողական Արուեստներու Համալսարանական Կրթաթոշակ
- Հ.Բ.Ը.Մ.Ի Հոգեւորականներու Պատրաստութեան Կրթաթոշակ
- Հ.Բ.Ը.Մ.Ի Միջազգային Կրթաթոշակ
- Հ.Բ.Ը.Մ.Ի ԱՄՆի Երկրորդական Վարժարաններէ Երջանաւարտներու Մրցանակ

Հ.Բ.Ը.Մ.Ի Համալսարանական Կրթաթոշակներու Ծրագրին յաւելեալ աջակցութիւն ընձեռեց ԱժՄ Սիմոնեան, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.Ի Կատարողական Արուեստներու Համալսարանական Կրթաթոշակի Ծրագրին յաւելեալ աջակցութեան մաս մը ապահովուեցաւ Լեւոն եւ Սաթենիկ Նազարեան Հիմնադրամի եւ Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին կողմէ: Հ.Բ.Ը.Մ.Ի Երկրորդականի Մրցանակի Ծրագիրը իրականացաւ Ժորժ Հոյոփիկեան Յիշատակի Հիմնադրամին միջոցով:



Գարուհի-Յովակիմեան Վարժարան, Պէյրութ, Լիբանան



Կատարողական արուեստի թոշակառու Արամ Տեմիրեան կը ղեկավարէ միջազգային համարի տէր թաւջութակահար Եօ Եօ Մայի եւ «Մետաֆի Ճանապարհ» նուագախումբի համերգը: Նկարը՝ Նիւ Ինկլընտի Երաժշտանոցի լուսանկարիչ Անտրէօ Հիրպիլոբի:

2008-2009ին Հ.Բ.Ը.Մ.Ի ութիւնը Շուրջ 2,300,000 Տոլար Կրթաթոշակ Տրամադրեց

2008-2009 եւ 2009-2010 ուսումնական իւրաքանչիւր տարեշրջանի ընթացքին, 25 երկիրներու շուրջ 400 ուսանողներ եւ մասնագէտներ Հ.Բ.Ը.Մ.Ի կրթաթոշակներ ստացան: Կրթաթոշակները բաշխուած են հինգ ցամաքամասերու վրայ, համապատասխանաբար ընդհանուր 400,000 եւ 600,000 ամերիկեան տոլար գումարներով: 2008-2009 ուսումնական տարեշրջանին 89,000 ամերիկեան տոլարի համալսարանական փոխատուութիւն կատարուեցաւ: Այդ կրթաթոշակներուն առընթեր, Հ.Բ.Ը.Մ.Ի ութիւնը շուրջ 1,000,000 ամերիկեան տոլար յատկացուց Հայաստանի զանազան համալսարաններու, ի շարս որոնց՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, Հայաստանի Ֆրանսական Համալսարանը, Հայկական Մանկավարժական Պետական Համալսարանը, ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հիմնարար Գրադարանը, եւլն: Ասկէ գատ, շուրջ 200,000 ամերիկեան տոլար յատկացուեցաւ ոչ-Հ.Բ.Ը.Մ.Ի հայկական վարժարաններու եւ կրթական հաստատութիւններու Միացեալ Նահանգներու եւ այլ երկիրներու տարածքին:



Մանուկեան-Տեմիրեան Վարժարան, Գանդկա Փարէ, ԱՄՆ



Համացանցային Հայկական Գոլէրը կը ներկայացուի Հայաստանի հանրութեան, Երևանի Արամ Խաչատրեանի անուան համերգասրահին մէջ, 28 Սեպտեմբեր 2008ին



Համացանցային Հայկական Գոլէրը ներկայացուեցաւ Արարական Միացեալ Էմբրուփիւններու Օնլայն-ժամանակակից դպրոցի աշակերտներուն: Դպրոցը ուսումնական համագործակցութեան մէջ կը գտնուի Գոլէրին հետ:

Հ.Բ.Ը.Մ.Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՑԻՆ ԳՈԼԷՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ՝ ԱՆԿԱԽԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՎԱՅՐԻ ԿԱՇԿԱՆԴՈՒՄՆԵՐԷ

Համացանցի եւ տեղեկատուական տարաբաղադրութեան ընծայած կարելիութիւնները հայկական կրթութեան նպատակներուն ծառայեցնելու նպատակով 2009ին պաշտօնապէս սկիզբ առաւ Հ.Բ.Ը.Մ.Ի-ի կողմէն Հայկական Համացանցային Գոլէրը: Հայկական այս բացառիկ կրթական հաստատութիւնը հայկական կրթութիւնը հասանելի կը դարձնէ բոլորին, առանց ժամանակի եւ տարածութեան սահմանափակումներու:

Անցնող հարիւրամեակի ընթացքին Հ.Բ.Ը.Մ.Ի-ի կողմէն հայկական կրթական ծրագրերուն սատարած է առաւելաբար Սփիւռքի թէ Հայաստանի աւանդական դպրոցներուն եւ համալսարաններուն միջոցով: Համացանցային Հայկական Գոլէրի ստեղծումով Հ.Բ.Ը.Մ.Ի-ի կողմէն պիտի շարունակէ սփիւռֆատարած գաղութներու կրթական պահանջներուն հասնելու իր գործընթացը, օգտագործելով նաեւ հեռակայ ուսուցման ժամանակակից միջոցները: Հայկական Համացանցային Գոլէրը կոչուած է յաղթահարելու սփիւռքի կրթական աշխարհագրական եւ ժամանակի պատնէշները: Հայկական Համացանցային Գոլէրի դասընթացները մատչելի պիտի ըլլան բոլորին, աշխարհի որ կողմն ալ գտնուին անոնք:

Կրթական Առաքելութիւն: Գոլէրը հասանելի պիտի ըլլայ բոլոր անոնց, որոնք կը ձգտին հայկական նիւթերու վերաբերեալ ամբողջական գիտելիքներ ստանալ՝ անկախ տարիքէ, բնակութեան վայրէ եւ ուսման կամ ծանօթութեան մակարդակէ:

Դասընթաց: Հայերէնի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի դասընթացներ:

Ուսուցման լեզուներ: Արեւելահայերէն, Արեւմտահայերէն, Անգլերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն եւ Սպաներէն:

Համացանցային, Դասընթացի Մասնակցողներու Համայնք: Առցանց կրթութեան բնագաւառի արձանագրած յառաջդիմութիւններուն շնորհիւ, Հայկական Համացանցային Գոլէրը ստեղծած է նաեւ ուսանողական համայնք մը, որ մշակութային կրթութեան կողմէն կրնայ նպաստել նաեւ ընկերային կապերու ամրապնդման, որուն միջոցաւ իրարու հաղորդակից կ'ըլլան Հայաստանի թէ Սփիւռքի մէջ սփռուած հայ ուսանողները:

Հաղորդակցութիւններու օգտագործումը Հայկական Համացանցային Գոլէրի ուսանողներուն կարելիութիւն կուտայ իրենց գտնուած վայրին մէջ սորվելու նոր նիւթեր, միեւնոյն ատեն դէմ առ դէմ խօսելու աշխարհի բոլոր անկիւնները գտնուող իրենց համադասարանցիներուն եւ համացանցային ուսուցիչներուն հետ:

Վկայագրի Ծրագիր եւ Վարկանիշային Դասընթացներ: Աւարտելով Համացանցային Հայկական Գոլէրի դասընթացներէն որեւէ մէկը, ուսանողներ կը ստանան

վարկանիշեր եւ տուեալ դասընթացը աւարտած ըլլալու հաստատագիր մը: Ուսանողներ կրնան նաեւ որեւէ դասընթացի հետեւիլ պարզապէս իրենց գիտելիքները հարստացնելու նպատակով: Գոլէրը իր ուսանողներուն կարելիութիւն ստեղծած է այդ վարկանիշերը փոխանցելու տարբեր համալսարաններ եւ կրթական հաստատութիւններ: Այժմ Գոլէրը հաւատարմագրութեան աշխատանքներ կը տանի Հայաստանի, Հիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի համալսարաններու մօտ:

Աշխարհի աւելի քան 1,000 հեռակայ համալսարաններու շարքին Համացանցային Հայկական Գոլէրը առաջինն է հայկական կրթական իրականութեան մէջ: Այսօր, հայ երիտասարդութեան միայն 5 տոկոսն է որ կը յաճախէ հայկական դպրոց: Մինչդեռ Համացանցային Հայկական Գոլէրը, շնորհիւ համացանցին եւ Multimedia-ի անսահման կարելիութիւններուն, կը հասնի բոլոր դպրոցականներուն եւ համալսարանականներուն: Համացանցային Գոլէրը կ'ամբողջացնէ նաեւ արդէն գոյութիւն ունեցող հայկական ամենօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններու կրթական միջոցները:

2009ի Ամառնային եւ Աշնանային կիսամեակներուն, տարբեր սերունդներ ներկայացնող աւելի քան 300 համացանցային ուսանողներ (17էն 82 տարեկան) մուտք գործած են Համացանցային Հայկական Գոլէրի դասարաններ՝ Միացեալ Նահանգներէն մինչեւ Ռուսաստան, Վենեզուելայէն մինչեւ Հարաւային Ափրիկէ, Արժանքիներէն մինչեւ Ռեյունեօն կղզի: Համացանցային Հայկական Գոլէրը 2010ին տօնեց իր առաջին տարեդարձը: Իր հիմնադրութենէն ի վեր Գոլէրը ունեցած է չորս կիսամեայ դասընթացներ 35 երկիրներէ աւելի քան 500 ուսանողներու մասնակցութեամբ:

Սիւլիֆոն Հովիտէն Երեւան: Համացանցային Հայկական Գոլէրի ստեղծման նախաձեռնութիւնը սկիզբ առաւ Հ.Բ.Ը.Մ.Ի-ի կողմէն Սիւլիֆոն Հովիտի մասնագիտի Ատենապետ Դոկտ. Երուանդ Զօրեանի կողմէ: 2004ին: Այս կրթական այլընտրանքային ծրագրին նպատակն է բաւարարել սփիւռքի պահանջները եւ ուսանողներուն այսօրուան հետաքրքրութիւնները: Այդ թուականէն ի վեր Համացանցային Գոլէրի ծրագրի նարտարագիտական մշակումին եւ Multimedia-ի օգնութեամբ դասանիւթերու պատրաստութեան աշխատանքները յառաջ տարուած են մեծ մասամբ Հայաստանի մասնագէտներուն կողմէ: Այդ դասընթացները բարելաւուած են առցանց ուսուցման մասնագէտ արտասահմանցի մանկավարժներու կողմէ՝ Երեւանի Պետական Համալսարանի Տեղեկատուական Ճարտարագիտութեան Ուսուցման եւ Հետազոտութեան Կեդրոնի գիտնականներուն եւ նարտարագէտներուն հետ ուղղակի գործակցութեան, ինչպէս նաեւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի շնորհած հաւատարմագրութեան միջոցով:

ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՒ ՅԱԶՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ



Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի 2009ին Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի մասնակիցներ Փոլ Գայայեանի հետ: Ան հիւրերէն մէկն էր, որ ամռան ընթացքին դասախօսեց համացանցի արժէքն եւ ինքնակենսագրական գրելու արուեստին մասին:

Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի, Փարիզի եւ Երեւանի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային ծրագիրները աշխարհացրիւ հայ ուսանողներուն բացառիկ առիթը կ'ընծայեն իրենց սպազայ սպարէզներուն համար անհրաժեշտ փորձառութիւն ձեռք բերել, միեւնոյն ատեն նպաստելով մասնակիցներու միջեւ մնայուն եւ տեսական բարեկամութեան

հաստատումին: Մասնագիտական դասընթացներուն առընթեր, Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային ծրագիրները մասնակիցներուն համար կը կազմակերպեն գանազան յայտագիրներ, գործունէութիւններ, դասախօսութիւններ, աշխատանքային հանդիպումներ, ընկերային երեկոներ եւ պտոյտներ:

ՆԻՒ ԵՈՐԿԻ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2009ին Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիրը տօնեց իր հիմնադրութեան 22-րդ տարեդարձը: Գործարարութեան աշխարհի կեդրոն Նիւ Եորքի մէջ, ուսանողներ, համապատասխան իրենց մասնագիտութիւններուն, առիթ ունեցան աշխատելու յայտնի ընկերութիւններու եւ հաստատութիւններու մէջ, միասնաբար իջեւանելով Նիւ Եորքի Համալսարանի հանրակացարանին մէջ: Երեկոներուն եւ շաբաթավերջերուն անոնք մասնակցեցան մասնագիտական եւ մշակութային յայտագիրներու եւ ներկայ գտնուեցան Մեծ Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու տարեկան ձեռնարկներուն:

Նախորդ երկու տարիներուն Արժանքիւնէն, Հայաստանէն, Աւստրալիայէն, Պրագիլէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Իտալիայէն, Լիբանանէն, Հոլանտայէն, Ռուսաստանէն, Սուրիայէն, Անգլիայէն եւ Միացեալ Նահանգներէն աւելի քան 70 հայ համալսարանականներ մասնակցեցան այս ծրագրին: 22-ամեայ հարուստ պատմութիւն ունեցող եւ համաշխարհային ցանցի մը վերածուած Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային ծրագրին իրենց մասնակցութիւնը բերած են ցարդ 700 շրջանաւարտներ:

Ծրագրի յաջողութիւնը ապահովելու մտահոգութեամբ Հ.Բ.Ը.Մ.ը պայմանաւորուած է հիւրընկալ ընկերութիւններու հետ, որոնց շարքին են Քոլումբիայի Համալսարանի Բժշկական Կեդրոնը, Hermes, Rothschild եւ Telegraph UK ընկերութիւնները: Շաբաթավերջերու ասանդակային գործունէութիւններուն մաս կը կազմեն հայկական պարերու դասընթացները՝ կազմակերպուած Հ.Բ.Ը.Մ.-ի հոշակաւոր «Անդրանիկ» պարախումբին կողմէ, ընդարձակ մասնագիտական ֆեմարկումները, ինչպէս Մեծ Նիւ Եորքի Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարժներու հովանաւորած Խորհրդատուական Ծրագիրը, որուն ընթացքին Ասպարէզային Փորձառութեան Ծրագրի մասնակիցներ խորհրդատուներու հետ խմբական գործունէութիւններ կը տանին:



Նիւ Եորքի 2009ի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի մասնակից Յակոբ Պոյանի իր խորհրդատու Որլիւմ Կրատի հետ, Ռոբշիլտի մէջ:

Հոգատար խորհրդատուներ ուսանողներուն ցուցումներ կուտան ձեռնարկատիրութեան եւ արհեստավարժ ինքնակենսագրականներ գրելու արուեստին մասին: Ուսանողներ կը մասնակցին համայնքային ծառայութեան «Լուսաշող Տարեցներու Համար» նախաձեռնութեան: Այդ ծրագրով անոնք կ'այցելեն հայկական ծերանոց, ուր ժամանակ կ'անցընեն բնակիչներուն հետ, ինչպէս նաեւ գեղարուեստական յայտագիր մը կը ներկայացնեն ուրախացնելու համար զիրենք:

3 Օգոստոս 2008ին, Վարդգէս Պալեան, որ իր Տիկնոջ՝ Ռիթա Պալեանի հետ միասին հիմնադրած եւ համատեմապետած էր Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ծրագիրը, կեանքէն հեռացաւ: Շնորհիւ Պալեաններու ղեկավարութեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային ծրագիրը դրական ազդեցութիւն գործած է բազմաթիւ մասնակիցներու կեանքին մէջ, վերջին 20 տարիներուն: Իրապէս, անգնահատելի է Պալեաններուն բերած նպաստը ազգային կեանքին: Վարդգէս Պալեանի մահուանէ ետք երկու Համատեմապետներ գլխաւորեցին Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ծրագիրը՝ Պալեաններու որդիներ՝ Ռաֆֆի Պալեան, որ Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան աշխատակից է, եւ Սարգիս ձէպէնեան, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ է եւ մաս կը կազմէ Cravath, Swaine, and Moore Իրավաբանական Ընկերութեան իբր Բաժնեկից Անդամ:



Երևանի 2008ի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի մասնակիցներ Խոր Վիրապ այցելութեան ընթացքին:

ԵՐԵՎԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմաւորուելով Նիւ Եորքի Բոյր ծրագիրէն ետք, Երեւանի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագիրը շուտով ասպարեզային փորձառութեան միջազգային ծրագրի մը վերածուեցաւ, որուն իրենց մասնակցութիւնը բերին տարբեր երկիրներէ ժամանող զանազան խումբեր՝ բոլորն ալ միացած ընդհանուր թելով մը, որ հայրենիքն է եւ մասնագիտական յաջողութիւններու ձգտումը:

Նախորդ երկու տարիներուն Աւստրալիայէն, Գանատայէն, Իսրայէլէն, Ռուսաստանէն, Զուիցերիայէն, Սուրիայէն եւ Միացեալ Նահանգներէն աւելի քան 40 հայ ուսանողներ Հայաստանի մէջ ամառնային հինգ ամսուանալի շաբաթներ անցուցին: Անոնք աշխատեցան Հայաստանի լաւագոյն հաստատութիւններուն եւ կազմակերպութիւններուն մէջ, ինչպէս Ազգային եւ Միջազգային Ուսումնասիրութեան Կեդրոնը, Գաֆէսեան Հիմնարկութիւնը, Deem Communication Ընկերութիւնը, Գէորգեան Ցուցասարիք, «Ոսկէ Ծիրան» Ֆիլմի Միջազգային Փառատունը, HSBC-Armenia դրամատունը, Երեւանի Պետական Բժշկական Համալսարանի Հիւանդանոցը, Ֆիլիհարմոնիք Նուագախումբը, Հայաստանի Մարդու Իրաւունքներու Պաշտպանի Գրասենեակը, «Շողակաթ» Հեռուստեսիւրը եւ Մ.Ա.Կ.-ի Միջազգային Զարգացման Ծրագիրը:

Իրենց ընտրած ասպարեզներուն մէջ անհրաժեշտ գիտելիքներ եւ հարուստ փորձառութիւն ձեռք գտելու զատ, Երեւանի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան ծրագրի մասնակիցներ հետեւեցան հայերէնի, հայոց պատմութեան եւ ժողովրդական պարի խտացեալ դասընթացներու, ինչպէս նաեւ ծանօթացան Հայաստանի պատմական յուշարձաններուն եւ տեսարժան վայրերուն: Արցախի մէջ անոնք ծանօթացան նաեւ Հ.Բ.Մ.ի ծրագիրներուն եւ ունկնդրեցին Հայաստանի ակադեմիական եւ քաղաքական շրջանակներու կարգ մը ներկայացուցիչներու դասախօսութիւնները: Երեւանի կեդրոնի մօտակալքը գտնուող առանձնատան մը մէջ ընդհանուր կեցութիւնը նպաստեց, որ մասնակիցներ ամուր բարեկամութիւն մը հաստատեն իրարու հետ: Աւելին, ծրագրի մասնակիցները սերտօրէն կապուեցան իրենց ազգային արմատներուն եւ խորապէս ըմբռնեցին հայ ըլլալու նշանակութիւնը:



Երեւանի 2009ի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի ուսանողներ Լարիսա Ալավերտեան եւ Քորիննէ Օզպէֆ անգլերէն կը դասաւանդեն Երեւանի որբանոցի մը երեխաներուն:



Երեւանի 2009ի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի մասնակիցներ կ'այցելեն Սարդարապատի յուշահամալիրը:

ՓԱՐԻԶԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանէն, Գանատայէն, Պարսկաստանէն, Լիբանանէն, Ռուսաստանէն եւ Միացեալ Նահանգներէն ժամանած 26 ուսանողներու համար Հ.Բ.Ը.Միութեան Փարիզի Ամառնային Ասպարէզային Փորձառութեան 2008ի եւ 2009ի ծրագիրները Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ իրենց գիտելիքները կատարելագործելու տեսակետէ բացառիկ առիթներ էին: Ուսանողներ Փարիզ հասան հինգ շաբթուան ասպարէզային փորձառութեան եւ մշակութային, ընկերային ու մասնագիտական գործունէութեանց լիարժէք ծրագիր մը իրագործելու նպատակով:

Ուսանողներ ապրեցան Հ.Բ.Ը.Միութեան Հիմնադիր-Նախագահ Պօղոս Նուպար Փաշայի կողմէ 1928ին հիմնուած «Մարի Նուպար Հայ Ուսանողներու Տուն»ին մէջ: Իր հիմնադրութենէն ի վեր ուսանողական այս տունը հիւրընկալած է իրենց բարձրագոյն ուսումը Փարիզի մէջ շարունակելու նպատակով տարբեր երկիրներէ: Ֆրանսա հասած բազմաթիւ հայ սերունդներ: Ծրագրի մասնակից ուսանողները իրենց մասնագիտական փորձառութիւնը հարստացուցին հեղինակութիւն վայելող հաստատութիւններու մէջ, ինչպէս՝ Grand Thornton Management Consulting-ը, Institut Supérieur des Métis-ը, Գալյանեան Ճարտարապետական Ընկերութիւնը, Lefevre Pellier & Associates-ը, Լուվրի թանգարանը, Musée d'Orsay-ն, Ֆրանսայի Ազգային Խորհուրդը, Փիէր եւ Մարի Գուրիէ Համալսարանը, Ֆրանսայի Միջազգային Ձայնասփիւռը եւ Thomson Telecom Communications-ը:

«ԿՈՐԻՋ» ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

2006-2007-ին, Եւրոպական Խորհուրդին հետ գործակցաբար եւ անոր հովանաւորութեամբ յաջորդաբար Պրիւսէլի եւ Վալանսի մէջ գործադրուեցան «Հ.Բ.Ը.Մի Ծրագիրներու Փոխանակում» եւ «Եւրոպայի Հայ Երիտասարդներու Համար Զարգացումի Դասախօսութիւններ» ծրագիրները: Այդ ծրագիրներուն իբր դրական արդիւնք, Հ.Բ.Ը.Միութիւնը, ապագայ հայ ղեկավարներ պատրաստելու մտասեւեռումով, 1-3 Մայիս 2009ին Վենետիկի մէջ «Կորիզ» անունով նոր ծրագիր մը հիմնեց:

Տասնինը մասնակիցներ Պելլիֆայէն, Պուկարիայէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Իտալիայէն եւ Սլոնիայէն հաւաքուեցան Միտիթարեան Միաբանութեան հայ մշակոյթի կեդրոն Ս. Ղազար կղզիի Մուրատ-Ռափայելեան վարժարանին մէջ: Բոլոր մասնակիցները եւրոպարմակ հայ երիտասարդ արհեստավարժներ էին, որոնք ընտրուած էին ուսումնական յառաջդիմութեան, մասնագիտական փորձառութեան, ղեկավար յատկանիշներու եւ իրենց տեղական համայնքային կեանքին մէջ մասնակցութեան չափանիշներու համաձայն:

Այդ ծրագրի շրջանակներուն մէջ տեղեկատուական բնոյթի դասախօսութիւններ տրուեցան Եւրոպահայ երիտասարդութեան շարքերուն մէջ ապագայ ղեկավար տարրերու ձեւաւորման հեռանկարներուն, ինչպէս նաեւ Եւրոպայի ոչ հայ հանրութեան մօտ, բաղաբացիական թէ կառավարական մակարդակներու վրայ, հայութիւնը յուզող հարցեր ներկայացնելու նիւթերով, որոնց յաջորդեցին բնակարկումներ եւ քանակներ: Ներկայացուեցան



Փարիզի 2008ի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի մասնակիցներ ֆրանսական ծովափնայ բաղաժ մը կատարած պտոյտի ընթացքին:

Ի յաւելումն ամենօրեայ աշխատանքային ժամանակացոյցին, ուսանողներ առիթը ունեցան ծանօթանալու Փարիզի տեսարժան վայրերուն եւ մշակութային կեանքին: Փարիզի Հ.Բ.Ը.Մի երիտասարդական խումբի անդամներուն օգնութեամբ ուսանողներ դիւրութեամբ ընտելացան Փարիզի ստորեային:

Իրենց մասնագիտական գիտելիքները ամբողջացնելու նպատակով ուսանողներ ունկնդրեցին մտաւորականներու եւ մասնագէտներու կողմէ տրուած դասախօսութիւններ, ինչպէս նաեւ այցելութիւն տուին Հայաստանի եւ Ղարաբաղի կառավարութիւններու ներկայացուցիչներուն:



2009ի Կորիզ կազմակերպչական փորձառութեան ծրագրի մասնակիցներու խորհրդաժողովը Վենետիկի մէջ:

զանազան նիւթեր, որոնք կը վերաբերին Հայաստանի տնտեսական եւ բաղաբանական իրավիճակին, Եւրոպայի մէջ Հ.Բ.Ը.Մի նպատակներուն եւ գործունէութեան, Ֆրանսահայ կազմակերպութիւններուն գործունէութեան, գերմանահայութեան կարգավիճակին, Հ.Բ.Ը.Մ.-ՀԱՅԳ գործընկերութեան, Հ.Բ.Ը.Մի Հայկական Համացանցային Գուլէթին, Հայաստան-Թուրքիա յարաբերութեանց եւ, վերջապէս, Ղարաբաղի որբեայրիներուն համար նախատեսուած սնունդի ծրագրին:



8 նոյեմբեր 2008ին Հ.Բ.Ը.Մ. «Յաջորդ Սերունդ» Խորհրդատուական Ծրագրի մասնակից ուսանողներ և խորհրդատուներ վայելեցին ծրագրի աւարտի առիթով կազմակերպուած հաւաքոյթը, որմէ ետք անոնք ներկայ գտնուեցան Հարաւային Գալիֆորնիայի և Օրեկոն նահանգի ֆուրպոլի խումբերու մրցումին:

ՅԱԶՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Փաստենայի Հ.Բ.Ը.Մ.ի գրասենեակին մէջ գործող «Յաջորդ Սերունդ» Խորհրդատուական Ծրագիրը, որուն նպատակն է օգնել ընկերային յոռի բարբերու հակամէտ պատանիներու, 2008ին 500,000 ամերիկեան տոլարի խոշոր դրամաշնորհ մը ստացաւ Միացեալ Նահանգներու կրթութեան Բարտոլոմայութեան: Մինչ այդ, խորհրդատուական յարաբերութիւնները հիմնուած էին կամաւորութեան սկզբունքի վրայ, որուն պատճառով խորհրդատու-խորհրդառու զոյգերու թիւի անը 65-ով կը սահմանափակուէր: Դրամաշնորհի միջոցներով այժմ արդէն ծրագիրը ի վիճակի է պաշտօնի կոչելու անձնակազմի երկու լրիւ դրոյքով վարիչներ, որով կարելի եղաւ կրկնապատկել մասնակիցներուն թիւը, միեւնոյն ատեն աւելի ընդգրկուն ծառայութիւններ մատուցել խորհրդատուներուն: Դրամաշնորհը պիտի օգտագործուի 2008-2011 տարիներու ծրագիրներուն համար, գլխաւորաբար նոր անձնակազմի ամսավարձերուն և առաւել մեծ թիւով երիտասարդներու ծառայելու կոչուած անհրաժեշտ միջոցներու գոյառումին:

2008ին, «Յաջորդ Սերունդ» ծրագիրը ընտրուեցաւ մաս կազմելու Փորթլենտ Համալսարանի Ամառնային Խորհրդատուական հեղինակաւոր Ծրագրին, որ պատուաբեր իրագործում մըն է, Բանի որ միայն 25 ծրագիրներ ընտրուած էին Միացեալ Նահանգներու ողջ տարածքին:

Խորհրդատուական Ծրագիրը 27 Փետրուար 2009ին շքեղ երեկոյթով մը նշեց իր հիմնադրութեան 10-ամեակը: «Վաղուան Աստղերը» խորագիրով հանդիսութեան ընթացքին, որուն ներկայ գտնուեցան համակիրներ, կառավարութեան և գաղութի ներկայացուցիչներ, 40,000 տոլար հանգանակուեցաւ: Երեկոյթին ընթացքին պատուուեցան «Screamers» հանրայայտ ֆիլմի բեմադրիչ և BBC-ի լուրերու հաղորդավար Գարլա Կարապետեանը և System of a Down համաշխարհային ռոք նուագախումբի կիթառահար Շաւո Օտանեանը, որոնք արժանացան «Յաջորդ Սերունդ Համայնքային Հերոս» մրցանակին:

«Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրը» կը շարունակէ կրթութեան և վարքի պատշանեցումի հարցերով օգտակար ըլլալ ուսանողներուն: Դրական դերակատարութեան օրինակներ ներկայացնելով, կամաւոր խորհրդատուներ երիտասարդ հայ ուսանողներուն կ'օգնեն որպէսզի անոնք պատասխանատու և ինքնավստահ չափահաս երիտասարդներ դառնան: Ուսանողներ ամէն ամիս կը մասնակցին մարզական, մշակութային, ընկերային և կրթական զանազան խմբային ձեռնարկներու: Տարեկան գեղարուեստական ձեռնարկներու ընթացքին երիտասարդներ կը ցուցադրեն իրենց տաղանդը:



22 Փետրուար 2009ին «Յաջորդ Սերունդ» ծրագիրը \$40,000 հանգանակեց իր 10-ամեակի շքանշանին: Ծրագրի հիմնադիր անդամները զնահատական յուշաճանդակ մը ստացան Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովէն, որոս իրենց յանձնեց Հարաւային Գալիֆորնիոյ Մրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերն Շահպագեան:




Ջալին՝ Բեմադրիչ Գարլա Կարապետեան և երաժիշտ Շաւո Օտանեան կը ստանան «Համայնքային Հերոս» իրենց յուշաճանդակները առ ի զնահատակ համայնքին փոխհատուցելու և դրական ազդեցութեամբ իրենց շրջապատը ազնուացնելու իրենց օրինակելի ընթացքին:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ



Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Վազգեն Եագուպեան կը հիւրընկալէ 11 Սեպտեմբեր 2009ին տեղի ունեցած «Բաց Դռներու Օր»ու մասնակիցները՝ 50 երիտասարդներ Դամասկոսէն, 26 երիտասարդներ Հալէպէն եւ 16 երիտասարդներ Պէյրութէն:



ԱՓՐԻԿԷ/ ԱՍԻԱ/ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

ԿԻՊՐՈՍ

Շնորհիւ Լաոնաբայի մասնաճիւղի յանձնառութեան եւ խանդավառութեան, արդէն իսկ գործնական ընթացքի մէջ է գաղութի նոր կեդրոնի մը կառուցման ծրագիրը: Այդ կեդրոնին մէջ պիտի գործէ նաեւ Հայկական տեղեկատուութեան կեդրոն մը, որ իր դռները բաց պիտի պահէ հանրութեան առջեւ:

ԵԳԻՊՏՈՍ

Միութեան Եգիպտոսի մասնաճիւղերը, միահամուռ ուժերով, նախորդ երկու տարիներուն երկու ձեռնարկներ կազմակերպեցին: Առաջին ձեռնարկը Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Աւագ Գիտաշխատող, հնագիտութեան դասախօս Համլէթ Պետրոսեանի դասախօսութիւնն էր Մեծն Տիգրանի (95-55 Ք.Ա.) կայսրութեան տարիներուն կառուցուած պատմական Տիգրանակերտ (Արցախ) քաղաքին մէջ կատարուող պեղումներուն մասին: Երկրորդ ձեռնարկը, առաւելապէս Գահիրէի մասնաճիւղին



Հ.Բ.Լ.Մ.-ի խումբ մը ղեկավարներ եւ անդամներ Աղեքսանդրիոյ Գրադարանին մէջ տեղի ունեցած Ալեքսանդր Սարուխանի ցուցահանդէսի բացման ընթացքին, 2009ի Դեկտեմբերին:

Պայմանանշաններ

- Երկիր** Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին
- ★ Շրջանակային Ցանձնաժողով
 - ☆ Մասնաճիւղ / Ցանձնախումբ
 - Վարժարան / Համալսարան
 - Շաբաթօրեայ Դպրոց
 - Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)
 - Բարեսիրական Ծրագիր
 - Մշակութային Ծրագիր
 - Բժշկական Սպասարկութիւն
 - Երիտասարդական Գործունէութիւն եւ Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր



Հ.Բ.Լ.Մ.-ի Աղեքսանդրիոյ Կեդրոնը, որ կարելի էր դէպքերու բաւարարող հանդիսացաւ Հ.Բ.Լ.Մ.-ի հիմնադրութեան տարիներուն, Եգիպտոսի կառավարութեան Մայիս 2008ի որոշումով իրր պատմական արժէք ունեցող շրջան պահպանութեան տակ առնուեցաւ:



Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի շրջանակը հանդիսութեամբ մը տօնեց իր «Խօսնակ» պաշտօնաթերթի հիմնադրութեան 50-ամեակը: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի ՏԷՄիրնեան Կեդրոնին մէջ, 15 Յուլիս 2008ին:



Հ.Բ.Ը.Մ.-ի Պէյրութի մասնաճիւղը Նոյեմբեր 22 2009ին վկայականներ բաժնեց տասնամեակներ շարունակ Միութեան ծառայած վեթերան անդամներու:



Միութեան Մշակութային Յանձնաժողովը 22 Մարտ 2009ին երաժշտական երեկոյ մը ներկայացուց, որուն ընթացքին ելոյթ ունեցան լիբանանահայ երիտասարդ երաժիշտներ:

կազմակերպութեամբ, հոշակաւոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի շուրջ 100 ստեղծագործութիւններու ցուցահանդէսն էր, որ տեղի ունեցաւ Ադեմսանդրիոյ հոշակաւոր գրադարանին մէջ, 2009ի Դեկտեմբերին: Այլ Սարուխանի գործերը, որոնք ցուցադրուեցան շուրջ ամիս մը, տրամադրուած էին մեծ արուեստագէտին ընտանիքին սերած բարեկամներու կողմէ:

ԱՂԵՔԱՆՆՈՒԿ 2008ի Մայիս ամսուան ընթացքին եգիպտոսի կառավարութիւնը, նկատի ունենալով Ադեմսանդրիոյ կեդրոնին պատմական արժէքը, որոշեց սահմանագծել այդ տարածքը: Համաձայն այդ որոշման, բացարձակապէս կ'արգիլուէր որեւէ շէնք ֆանդի հոն: Այդ տարածքի շրջագծին մէջ կը գտնուի նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի կեդրոնը, որ իբր հիմնադրութեան տարիներու իրադարձութիւններու թատերավայր պատմա-մշակութային արժէք ունեցող շէնք մըն է:

ԳԱՀԻՐԷ Մասնաճիւղը կազմակերպիչներէն մէկն էր «Հայաստան եւ Արաբական Աշխարհը-Անցեալը եւ Ներկան» վերտառութեամբ միջազգային աննախընթաց գիտաժողովի մը, որ կայացաւ Գահիրէի Համալսարանի Արուեստից հիմնարկին մէջ, 28 Ապրիլ 2008ին: Գիտաժողովը, որ կը վայելէր եգիպտոսի Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւններու եւ Գիտական Հետազոտութիւններու Նախարարութեան հովանաւորութիւնը, քննարկեց դարերու ընթացքին հայկական համայնքներու տարածումն եւ տիրական ներկայութիւնը արաբական երկիրներու մէջ:

18 Յունուար 2009ին, եգիպտոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան մէջ տեղի ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերն Թերզեանի արարքերէն լեզուով հրատարակած «Եգիպտահայ Հայեացքներ Պատմութեան եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» խորագրեալ գիրքին շնորհահանդէսը: Ժողովածուն կ'ընդգրկէ Թերզեանի ֆառասուն յօդուածները, որոնք 1998-2008 տասնամեակին լոյս տեսած են «Արեւ» օրաթերթի արարքերէն յանդիման մէջ: 23 Նոյեմբեր 2008ին տեղի ունեցաւ կարեւոր ցուցահանդէս մը «Էլ Հանաժէր» Մշակութային Կեդրոնէն ներս, ուր ցուցադրուեցան եգիպտահայ տարբեր սերունդի 38 գեղանկարիչներու 100 գործեր: Ցուցահանդէսը նուիրուած էր եգիպտահայ մեծանուն գեղանկարիչ Բիւզանդ Կոնստանտինի ծննդեան 100-ամեակին:

ԻՐԱԳ

Հակառակ երկրին մէջ տիրող աննպաստ կացութեան, Պաղտատի մասնաճիւղը կը շարունակէ իր սեփական կեդրոնին մէջ կազմակերպուող տարբեր ձեռնարկներու միջոցով համախումբ պահել անդամակցութիւնը:

12 Դեկտեմբեր, 2009ին տեղի ունեցաւ Յովհաննէս Շիրազի մահուան 25-ամեակին նուիրուած գեղարուեստական ձեռնարկ մը: Յայտագրին ընթացքին հնչեցին Շիրազի բանաստեղծութիւնները եւ բանաստեղծութիւններու հիման վրայ գրուած երգերը, ինչպէս նաեւ ներկայացուեցաւ Շիրազի կեանքին մէկ օրուն թատերականացուած պատկերը՝ ըստ բանաստեղծուհի Մետաֆաայի բնագիրին: Ձեռնարկին ընթացքին կազմակերպուած էր նաեւ Շիրազի բանաստեղծութիւններու հատորներու ցուցահանդէս մը:

ԼԻԲԱՆԱՆ

Մեծն Պէյրութի Անթիլիասի շրջանին մէջ գտնուող ՏԷՄիրնեան Կեդրոնը, որ շարունակաբար աշխոյժ գործունէութեան վայր մըն է, 2009ին տօնեց իր հիմնադրութեան 10-ամեակը: Միութեան Լիբանանի մասնաճիւղի կազմակերպած յիշարժան ձեռնարկներէն էին Հ.Ե.Ը.-ի պաշտօնաթերթ «Խօսնակ»-ի եւ «Վահրամ Փափագեան» թատերախումբի հիմնադրութեանց 50-ամեակի հանդիսութիւնները: Արդարեւ, 15 Յունիս 2008ին տեղի ունեցած «Խօսնակ»-ի 50-ամեակին նուիրուած հանդիսութեան ընթացքին պատուուեցան նախկին խմբագիրները: Այդ առիթով ելոյթ ունեցողներ շեշտեցին «Խօսնակ» պարբերականին կատարած դերը լիբանանահայ բազմաթիւ սերունդներու կեանքին մէջ:

Իր հիմնադրութեան Ոսկեայ Յորելեանին առիթով, 2009ի Փետրուար եւ Մարտ ամիսներու ընթացքին «Վահրամ Փափագեան» թատերախումբը ներկայացուց ժիրայր Անանեանի «Տէր, Մի Թողուր Մեզ Անտէր» ողբերգակատակերգական թատերախաղը: Թատերախումբը Մարտ 2008ին ներկայացուց նաեւ հայկական դասական թատերախաղեր եւ Արթուր Միլլըրի «Սալեմի Վիուկները» թատերախաղը: Ապա թատերախումբը հրաւիրուեցաւ Յորդանան հիւրախաղերու համար:

Հ.Ե.Ը.-ի Մշակութային Յանձնախումբը 2009ի Մարտին կազմակերպեց «Երաժշտական Գարուն-2009»-ը, որուն ընթացքին դասական եւ եւրոպական ստեղծագործութիւններով հանդէս եկան լիբանանահայ յայտնի ու երիտասարդ երաժիշտներ:

ՍՈՒՐԻԱ

ՀԱԼԷՊ Հալէպի մասնաճիւղը, իր բազմաթիւ յանձնախումբերուն եւ մշակութային ու ընկերային բազմապիսի ձեռնարկներուն միջոցով աշխոյժ կը պահէ հայահոծ այս գաղութին ազգային եւ մշակութային կեանքը: Յատկանշական ձեռնարկներու ցանկին մէջ յիշատակելի է Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Երջանկայիշատակ Կաթողիկոսին Ծննդեան 100-Ամեակին նուիրուած յիշատակի հանդիսութիւնը, 5 Յունիս 2009ին:

Հոկտեմբեր 2009ին տեղի ունեցաւ նաեւ հանդիսութիւն մը նուիրուած Յակոբ Միքայէլեանին՝ առ ի գնահատանք «Պետրոս Աղամեան» թատերախումբին մատուցած իր 50 տարիներու ծառայութեան: Դասախօսութիւններու շարքը, որ նուիրուած էր 1850-1950 հարիւրամեակի հայ մշակոյթի մեծանուն դէմքերուն, մեծ հետաքրքրութեամբ ընդունուեցաւ:

ԴԱՄԱՍԿՈՍ Միութեան կեդրոնէն ներս շարունակաբար կազմակերպուող ընկերային գործունէութիւններով, ինչպէս նաեւ մշակութային բարձրորակ ձեռնարկներով, որոնց կը մասնակցին ամէն տարիի անդամներ, մասնաճիւղը իր աշխոյժ ներկայութիւնը կը պահպանէ սուրիական մայրաքաղաքին մէջ: Յատկանշական էր 2008ի Դեկտեմբերին Ուիլիըմ Սարոյեանի ծննդեան 100-ամեակին նուիրուած արարերէն, անգլերէն եւ հայերէն լեզուներով եօթեայ դասախօսութիւններու շարքը:

ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑՆԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

2009ի երկրորդ կիսուն Արաբական Ծոցի շրջանին մէջ՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Հ.Բ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղ մը ծնունդ առաւ, որ տեղւոյն գաղութին հետ միասնաբար կազմակերպուող ձեռնարկներով արդէն իսկ ինքզինք գգալի կը դարձնէ Տուպայի եւ Ապու Տիպայի մէջ:



Հալէպի Կոմիտաս Սենեկային Նուագախումբին Պէյրութի համերգը տեղի ունեցաւ 31 Հոկտեմբեր 2009ին, Տէմիրնեան Կեդրոնին մէջ:



Հալէպի Հ.Ե.Ը.-ի Գործադիր Մարմնի Ատենապետ Վիգէն Աթթարեան յիշատակի Արծաթեայ ափսէն կը յանձնէ Յակոբ Միքայէլեանին՝ առ ի գնահատանք անոր 50-ամեայ ծառայութեան Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Պետրոս Աղամեան թատերախումբին մէջ: Յակոբ Միքայէլեանին նուիրուած հանդիսութիւնը տեղի ունեցաւ 5 Յունիս 2009ին:



29 Մայիս 2009ին Դամասկոսի մասնաճիւղին երիտասարդաց Ընկերակցութիւնը Դանիոյ դեսպանատան մէջ ցուցահանդէս մը կազմակերպեց նուիրուած Դանիացի Միսիոնար Պոտիլ Գաթարինա Պիտրնի:



Հալէպի մասնաճիւղը 15 Փետրուար 2009ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Երջանկայիշատակ Կաթողիկոսին Ծննդեան 100-Ամեակին նուիրուած յիշատակի հանդիսութիւն մը կազմակերպեց:

ԵՒՐՈՊԱ

Գիտակից այն իրողութեան թէ Եւրոպայի հայկական գաղութները Հայաստան-Սփիւոֆ յարաբերութեանց մէջ կարեւոր դեր ունին կատարելիք, նաեւ նկատի ունենալով Ռուսիոյ մեծագոյն հայկական գաղութին հետ Հ.Բ.Ը.Միութեան կապերու զարգացումը, Կեդրոնական Վարչական Ժողովը որոշեց նոր դեկլարար մարմին մը ստեղծել Եւրոպայի մէջ՝ Հ.Բ.Ը.Մ. Եւրոպայի Շրջանակային Ցանձնաժողովը: Այդ նպատակով, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովը Փետրուար 1-3, 2008ին, Պրիւսէլի մէջ Համաեւրոպական խորհրդաժողով մը գումարեց, որուն ներկայ գտնուեցան 100-է աւելի անձեր, որոնց շարքին՝ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի, Հ.Բ.Ը.Մ.ի Եւրոպայի նորանշանակ Վարչութեան, Եւրոպական Միութեան երկիրներուն մէջ գործող Միութեան մասնաճիւղերու եւ Երիտասարդ Արհեստավարժներու անդամներ: Հ.Բ.Ը.Մ.-Եւրոպայի առաջին Ատենապետ նշանակուեցաւ Տիար Ալէքսի Կեօվնեան:

Հ.Բ.Ը.Մ.ի եւրոպայի նոր համակարգին առաջնութիւնը կ'ընդգրկէ Հ.Բ.Ը.Մ.ի համահայկական ծրագիրներուն ընդմէջէն, տեղական կառոյցներու հետ գործակցութեամբ, Եւրոպական Միութեան երկիրներուն մէջ գոյութիւն ունեցող կամ նոր ձեւաւորուող հայկական գաղութներուն կազմակերպումը, հայկական ինքնութեան, պատմութեան եւ մշակոյթին նուիրուած հետազոտութիւններու փառատեմք, հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի դասաւանդման զարգացումը արդիական միջոցառումներով: Միութեան Եւրոպայի Վարչութիւնը անհատներ եւ կազմակերպութիւններ զօրաշարժի պիտի ենթարկէ Եւրոպայի տարածքին Հ.Բ.Ը.Մ.ի առաջնութիւնը զօրացնելու նպատակով:

ՊԵՆՃԻՔԱ

ՊՐԻՒՔՍԷԼ Հայաստանի եւ Սփիւոֆի Եւրոպայի հետ յարաբերութիւններուն առնչուող հարցերու գծով, Inside Europe անկախ եւ հանրային ֆաղափակնութեան մէջ մասնագիտացած կազմակերպութեան հետ գործակցաբար, Հ.Բ.Ը.Մ.-ը 1 Փետրուար 2009ին գրասենեակ մը բացաւ Պրիւսէլի մէջ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՓԼՈՎՏԻԻ 2008ի Ապրիլ ամսուան ընթացքին, Փլովտիի մասնաճիւղին, Էրեբունիէ համայնքը ելոյթներու համար պուլկարական Սիլիսթրա եւ Եամպոլ ֆաղափներ հրաւիրուեցաւ: Եամպոլի մէջ տեղի ունեցած համերգը կազմակերպուած էր Սիլիվընի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղին հետ գործակցաբար՝ հայերու հետ բարեկամական յարաբերութիւններու մէջ գտնուող ֆաղափայտին նախաձեռնութեամբ: Միւս կողմէ, մասնաճիւղը հայկական այլ կազմակերպութիւններու հետ միասին, 21 Մարտ 2009ին, պարահանդէս-հանգանակութիւն մը կազմակերպեց ի նպատակ հայկական մշակութային կեդրոնի սրահի եւ դպրոցի մարզասրահի նորոգութեան: Տպաւորուած շրջանակի ցուցաբերած խանդավառութենէն, տեղւոյն ֆաղափայտարանը 45,000 պուլկարական Լեվաս (շուրջ 30,000 տոլար) տրամադրեց մարզասրահին նորոգութեան համար:

ՍՈՖԻԱ Հ.Բ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղին յատկանշական նախաձեռնութիւնն է Սոֆիայի Սենեկային Նուագախումբը: Նախորդ երկու տարիներուն ընթացքին նուագախումբը շուրջ տասներկու ելոյթներ ունեցած է, որոնց ընթացքին դասական եւ ժողովրդական երաժշտութեան սիրահարներ, հայ թէ օտար, վայելած են նուագախումբին կատարողութիւնը: Պուլկարական ազգային հետաւետսիլը, դասական երաժշտութեան յայտագիրներու ծիրին մէջ, իւրաքանչիւր համերգէ բաժիններ ցուցադրած է առիթը ընձայելով լայն հասարակութեան ընթրշինելու նուագախումբի ելոյթները: Յիշարժան է մասնաւորապէս 20 Դեկտեմբեր 2009ին տեղի ունեցած համերգը, որուն յաջորդեց թուրք-հայ փաստաբան-հեղինակ Ֆեթիյէ Չէփինի պուլկարերէնի թարգմանուած յայտնի, Մեծ Մայրսն գիրքին շնորհանդէսը:



1-3 Փետրուար 2008ին Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը Համաեւրոպական ժողով մը գումարեց Պրիւսէլի մէջ: Երեք օր տևած ժողովին մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի Վարչութեան, Եւրոպական Միութեան երկիրներուն մէջ գործող միութեան մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ Միութեան Եւրոպայի Երիտասարդ Արհեստավարժներու կառոյցներուն ներկայացուցիչները:



21 Մարտ 2009ին, Փլովտիի գաղութի անդամներ, մասնակցեցան Novotel պանդոկին մէջ տեղի ունեցած բարեսիրական տարեկան առաջին նաշկերոյթ-պարահանդէսին: Ջեռնարկը միասնաբար կազմակերպած էին Հայց. Առաքելական Ս. Գեորգ եկեղեցւոյ Միական Խորհուրդը եւ «Երևան» կազմակերպութիւնը:



Սոֆիայի Սենեկային Նուագախումբի 2008-2009 տարեշրջանի զարմանալին առաջին համերգը:

Ֆրանսայի Շրջանակ

- ☆ **Լիոն**
Հայկական Ռատիոժամ
երիտ. Գործ.
- ☆ **Մարսել**
երիտ. Գործ.
ԵՍ.
- ☆ **Նիս**
- ☆ **Փարիզ**
Շաբաթօրեայ Դպրոց
ԵՍ.
Ահագանգ Թատերախումբ
Գողթան Երգչախումբ
Նուպարեան Գրադարան
Կորիզ կազմակերպչական
փորձառութեան ծրագիր
Ամառնային Ցերեկային
Ճամբար
Ասպար. Փորձ.
Ամառնային Ծրագիր
երիտ. Գործ.
- ☆ **Սեն Ծամոն / Սեն Եթեն**
երիտ. Գործ.
- ☆ **Վալանս**
երիտ. Գործ.
- ☆ **Վիեն**
Շաբաթօրեայ Դպրոց
երիտ. Գործ.



ՖՐԱՆՍԱ

Հ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի, Մարսելի, Փարիզի եւ Վալանսի մասնաճիւղերը, Չոպանեան հիմնարկի հետ գործակցաբար, Ապրիլ 2008ին շրջուն դասախօսական շարք մը կազմակերպեցին «Հայաստանի Անվտանգութեան Հիմքերը եւ անոնց նշանակութիւնը» նիւթով: Չորս ֆաղաֆներուն մէջ տեղի ունեցած դասախօսութիւններուն ներկայ գտնուեցան հարիւրաւոր ունկնդիրներ: Չոպանեան Հիմնարկը Հարաւային Կովկասի, Փոքր Ասիոյ եւ Միջին Արեւելի հարցերու վերաբերեալ ռազմավարական հետազոտութիւններ կատարող անկախ հաստատութիւն մըն է:

ԼԻՈՆ 11 Սեպտեմբեր 2009ին հանդիսաւորապէս բացուեց կատարուեցաւ մասնաճիւղի նորակառոյց կեդրոնին: Բացման ներկայ էին Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայացուցիչներ եւ կառավարական անձնաւորութիւններ, որոնց շարքին Լիոնի ֆաղաֆապետ Ժերար Փոլլոմպի:

ՄԱՐՍԵՅ 2008 Յունիսին մասնաճիւղը պատուեց իր անդամներէն Տիտի Փարաֆեանը, որ Ֆրանսայի երկրորդ մեծագոյն ֆաղաֆին՝ Մարսելի ֆաղաֆապետի վարչակազմին մաս կազմած էր: 12 Դեկտեմբեր 2008ին մասնաճիւղը կազմակերպեց դասախօսական ձեռնարկ մը, որուն իբր կեդրոնական դէմքեր մասնակցեցան Ռաբիլ Տիմիշը եւ Ֆեթիլիէ Ձէթիլը: Այդ առթիւ տեղի ունեցաւ նաեւ գիրքի ցուցահանդէս եւ վաճառք:

ՓԱՐԻԶ Երեւանի Հայկական Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Տնօրէն Հայկ Տեմոյեան 2008ին եւ 2009ին երկու դասախօսութիւններ տուաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ալեք Մանուկեան կեդրոնին մէջ: Առաջին դասախօսութիւնը կ'անդրադառնար Հայ-թրքական յարաբերութիւններու իրադրութեան, ինչպէս նաեւ Ցեղասպանութեան Թանգարանի առաքելութեան: Երկրորդ դասախօսութեան նիւթը նուիրուած էր Տեմոյեանի հեղինակած «Հայկական Մարգակաւ Մարժումը եւ Մարմնամարզը Օսմանեան Կայսրութեան Մէջ» գիրքին:

- ☆ **Յունաստանի Կեդր. Յանձնաժողով**
- ☆ **Աթէնք**
Արքայի Գալիֆեան Վարժարան
երիտ. Գործ.
- ☆ **Թեսալոնիկէ**
Պարախումբ
- ☆ **Պուրկաս**
ԵՍ.
- ☆ **Տալին**
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ **Հասնովօ**
Շաբաթօրեայ Դպրոց
Կոմիտաս Երգչախումբ
Երիտասարդաց
Թատերախումբ
- ☆ **Փլովտի**
Շաբաթօրեայ Դպրոց
ԵՍ.
Էրեբունի Երգչախումբ
Միրած Պարախումբ
Կանաչ Ճամբար
երիտ. Գործ.
- ☆ **Րուսէ**
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ **Սիսթրա**
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ **Սիվըն**
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ **Սոֆիա**
ԵՍ.
Սենեկային Նուագախումբ
Ընկեր Ճամբար
երիտ. Գործ.
- ☆ **Վարնա**
- ☆ **Եամպոլ**
Շաբաթօրեայ Դպրոց
Արաւօտ Երգչախումբ

Պայմանանշաններ

երկիր
երկիր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին

☆ Շրջանակային Յանձնաժողով

☆ Մասնաճիւղ / Յանձնախումբ

● Կեդրոն / Գրասենեակ Վարժարան / Համալսարան Շաբաթօրեայ Դպրոց

երիտ. Արհեստավարժներ (ԵՍ.) Մշակութային Ծրագիր Երիտասարդական Գործունէութիւն եւ Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր Հ.Բ.Ը.Մ. Գործընկերներ



Հ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի, Մարսելի, Փարիզի և Վայանի մասնաճյուղերը, համագործակցելով Չոպանեան Հիմնարկին հետ, 2008ի գարնան շրջանում դասախոսություններու շարք մը կազմակերպեցին «Հայաստանի Անվտանգութեան Հիմքերը և անոնց նշանակութիւնը» ներքով:



Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ երուանդ Զօրեան և Հ.Բ.Ը.Մ.-ի Հայաստանի Ներկայացուցչութեան Տնօրէն Աշոտ Ղազարեան Մոսկուայի Պետական Համալսարանին մէջ՝ շրջապատուած հայ ուսանողներով, որոնք ներկայ եղան 18 Սեպտեմբեր, 2009ին տեղի ունեցած Հ.Բ.Ը.Մ.-ի կրթական և երիտասարդական ծրագիրներու ներկայացումին: Ուսանողներ յատկապէս տեղեկացան Միութեան նորագոյն նախաձեռնութեան՝ Հայկական Համացանցային Գոլէֆին մասին:



Հ.Բ.Ը.Մ-ՀԱՅՔ (Ֆրանսիոյ, Գերմանիա) գրասենեակը պաշտօնապէս իր դռները բացաւ 1 Ապրիլ, 2008ին: Գերմանիոյ սրտին մէջ գործող Հ.Բ.Ը.Մ-ՀԱՅՔ-ի գրասենեակը Գերմանիոյ մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի վերջին տարիներու գլխաւոր նախաձեռնութիւնն էր:

ԳԵՐՄԱՆԻԱ

1 Ապրիլ 2008ը յատկանշական օր մը եղաւ Հ.Բ.Ը.Մ.-ի և Գերմանիոյ մէջ ՀԱՅՔ Ուսանողական Ընկերակցութեան համար: Արդարեւ, այդ օրը պաշտօնապէս բացուեց կատարուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ՀԱՅՔ Ֆրանսիոյ գրասենեակին: Ասիկա վերջին 20 տարիներուն Հ.Բ.Ը.Մ.ի Գերմանիոյ մէջ առաջին կարեւոր նախաձեռնութիւնն էր: Գերմանիան եւրոպական Միութեան ամենաբազմամարդ երկիրն է: ՀԱՅՔ-ը, ուսանողներու, գիտնականներու և երիտասարդ Արհեստավարժներու կազմակերպութիւն մըն է, որ կը գործէ Գերմանիոյ տարածքին: Հ.Բ.Ը.Միութեան և ՀԱՅՔի երկարատեւ գործակցութեան արդիւնաւորումն էր գրասենեակին հաստատումը: Գրասենեակին բացման առիթով Հ.Բ.Ը.Մ.-ՀԱՅՔ-ը պարահանդէս մը կազմակերպեց, որուն ներկայ գտնուեցան Հ.Բ.Ը.Մ.-ի եւրոպայի շրջանակի անդամներ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Գեղարուեստը փառաբանելու նպատակով, Տիկնանց Օժանդակ Մարմինը, Յունական Ժողովրդական Արուեստի Թանգարանին հետ գործակցաբար, Մայիս 10, 2009ին, թանգարանին մէջ հայկական ժողովրդական արուեստին նուիրուած դասախոսութիւն մը կազմակերպեց: Հիւրեր ծանօթացան ժողովրդական արուեստի հիմնական տարրերուն և այդ արուեստին ստեղծման մէջ եկեղեցւոյ կատարած կարեւոր դերին: Անոնք նաեւ առիթը ունեցան բաղդատելու հայկական և յունական ժողովրդական արուեստները և Փոքր Ասիոյ եկեղեցական զարդարուեստը:

ՄՊԱՆԻԱ

Հ.Բ.Ը.Մ.-ի առաջնութեամբ խանդավառ նոր գաղութները փառաբանելու նպատակով, Միութիւնը 17 Յունուար, 2009ին, մշակութային ձեռնարկի և պարահանդէսի մը ընթացքին պաշտօնապէս գործակցութեան ծրագիր մը սկսաւ Պարսելոնայի Հայկական Մշակութային Ընկերակցութեան (ACAB) հետ: Նոյն օրերուն Հ.Բ.Ը.Մ.-ի եւրոպայի մասնաճյուղին ետամսեայ ժողովը գումարուեցաւ Պարսելոնայի մէջ, փառաբանելու համար գաղութի գործունէութիւնը: Ժողովի ընթացքին եւրոպայի Վարչութեան անդամներ և Պարսելոնայի Հայկական Մշակութային Ընկերակցութեան ներկայացուցիչներ մօտէն ծանօթանալու և միասնական գործունէութեան ուղիներ քննարկելու առիթը ունեցան:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մոսկուայի երիտասարդ Արհեստավարժներ և ուսանողներ համախմբող SIVAM կազմակերպութեան հետ իր գործակցութեան իրրեւ արդիւնք, ինչպէս նաեւ Մոսկուայի Պետական Համալսարանին հետ գործակցաբար, Հ.Բ.Ը.Մ.-ը հովանաւորեց իր Ամառնային Ուսանողական Ասպարեզային Փորձառութեան երեք ծրագիրներուն ներկայացումը՝ փառաբանելու համար մոսկուաբնակ հայ երիտասարդութիւնը մասնակցելու այդ ծրագիրներուն: Ծրագիրներուն ներկայացումը տեղի ունեցաւ 12 Նոյեմբեր 2008ին, Մոսկուայի Պետական Համալսարանին մէջ: Միեւնոյն տարին, SIVAM-ը Հ.Բ.Ը.Մ.-ի Լոս Անճելոսի երիտասարդ Արհեստավարժներուն հետ գործակցաբար կազմակերպեց համացանցային վիտէօ-ֆեմարկում մը նուիրուած հայկական ինֆորմեյթեան պահպանման շուրջ տեսակէտներու փոխանակման:

ԱՆԳԼԻԱ

Մասնաճյուղը, տեղւոյն Թահթա հայկական դպրոցին հետ գործակցաբար, 17 Մայիս 2009ին, «Հայաստանի Գոյները և Հայաստանը Սփիւտահայ Երեխաներու Աչքով» վերնագրին տակ արուեստի մրցոյթ և ցուցահանդէս մը կազմակերպեց: Զեռնարկին նպատակն էր յայտնաբերել երեխաներուն ծանօթութիւնը հայ արուեստի և արուեստագէտներու մասին, ինչպէս նաեւ ընդարձակել անոնց գիտելիքները սեփական մշակութային ժառանգութեան մասին:



17 Յունուար 2009-ին, Պարսելունայի մէջ տեղի ունեցաւ յատուկ ձեռնարկ մը Հ.Բ.Ը.Մ.ի եւ Պարսելունայի Հայկական Մշակութային Ընկերակցութեան միջեւ ստեղծուած գործակցութեան առիթով: Զեռնարկին մասնակցեցեան սպանահայեր եւ եւրոպական այլ երկիրներէ ժամանած հայրենակիցներ: Գործակցութեան պաշտօնականացման այս ձեռնարկը կը նշէր Հ.Բ.Ը.Մ.իութեան շրջանակի ընդարձակումը եւրոմիութեան մեծագոյն երկիրներէն մէկուն մէջ:



Ժիլպէտ Սիմոնայի «Երեւան» գիրքի շնորհանդէսը, որ տեղի ունեցաւ Փարիզի Հ.Բ.Ը.Մ.ի կազմակերպած գրքի ցուցահանդէս-վաճառքին ընթացքին, 16 Մայիս 2009ին:



Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի մասնաճիւղի եւ Թաիթա Հայկական Կիրակնօրեայ դպրոցին համատեղ կազմակերպած տպաւորիչ ձեռնարկին փակումը:



13 Նոյեմբեր, 2008ին, Եւրոխորհրդարանին մէջ (Պրիւսել), Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ի կազմակերպութեամբ գիտաժողով մը տեղի ունեցաւ «Ուղեւորութիւն դէպի մշակութային յայտնաբերում-հայկական ժառանգութիւնը Թուրքիոյ մէջ» խորագրով:




Մայիս 29 2009ին, Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը կազմակերպեց խորհրդածողով մը «Եւրոխորհրդարանը եւ հայերը խորհրդարանի նոր կազմին մէջ» խորագրով, նպատակ ունենալով թեկնածուներու ծանօթացումը ընտրութիւններու նախօրեակին:

ԳԱՆԱՏԱ

ՄՈՆԹՐԷԱԼ 2008ին մասնաճյուղը իր հիմնադրութեան 50-ամեակը տօնեց հանդիսաւոր ձեռնարկներով, ի շարքս որոնց Մարտ 8ին տեղի ունեցած մեծարանքի երեկոն: Մոնթրէալի կենսունակ շրջանակի աշխոյժ գործունէութեամբ հարուստ պատմութիւնը եւ ապագայի հեռանկարները արժանաւորապէս գնահատուեցան այս յորելնական երեկոյթի ընթացքին, երբ նաեւ պատուուեցան նախկին Ատենապետները: Յորելնական տօնախմբութիւնները եզրափակուեցան Կալա-պարահանդէտով մը, որ տեղի ունեցաւ 18 Մայիսին, հարիւրաւոր անդամներու եւ համակիրներու մասնակցութեամբ: Զեռնարկին ընթացքին հանգանակուեցաւ 100,000 տոլար գումար մը, որ կը նպատակադրէր բարեկարգել եւ նոր յարմարութիւններով օժտել Միութեան Կեդրոնի երիտասարդական սրահը: Մասնաճյուղէն ներս աշխոյժ գործունէութիւն ծաւալող Ոսկեայ Տարիքի Յանձնախումբը գեղարուեստական ձեռնարկով մը 18 Հոկտեմբեր 2009ին տօնեց իր հիմնադրութեան 35-ամեակը: Այդ առթիւ մեծարուեցան Յանձնախումբին հիմնադիր եւ գործող անդամները:

Մոնթրէալի մասնաճյուղը իրագործեց կարեւոր նախաձեռնութիւն մը եւս, յատուկ հանգանակութեան ձեռնարկով մը, որ ապահովեց Աստղագիտութեան Միջազգային Միութեանէն ներս Հ.Հ. Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի անդամակցութիւնը եւ անոր մասնակցութիւնը Միութեան 2009- ի եռամեայ Ընդհանուր Ժողովին:

ԹՈՐՈՆՏՕ Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի մասնաճյուղին եւ Զարուկեան վարժարանի տարեկան աւանդական միացեալ ճաշկերոյթ-պարահանդէսը պատուեց Սարգիս Ասատուրեանը, որ Գանատայի Խորհրդարանի անդամ ընտրուած առաջին հայն էր: 14 Հոկտեմբեր 2009ին, մասնաճյուղը հովանաւորեց Հայաստանի երգահաններու եւ երաժիշտներու «Երագ Արուեստ» խումբին համերգները, որոնք մեծ գոհունակութիւն պարգեւեցին խանդավառ երաժշտասէրներուն: Միութեան կեդրոնէն ներս նաեւ կանոնաւորապէս կազմակերպուեցան հայկական ազգային եւ մշակութային նիւթերու առնչուող դասախօսութիւններ:




Մայրը Պոպէլեան կը խօսի իր Children of Armenia գիրքին մասին Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք Մանուկեան կեդրոնէն ներս 2009ին կայացած ձեռնարկի ընթացքին: Գիրքի ծանօթացումի ձեռնարկը միասնաբար կազմակերպուած էր NAASR (Հայագիտական Ուսումնասիրութեանց Կեդրոն) եւ Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճյուղին կողմէ:



Շարք, 4 Հոկտեմբեր 2008ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի մասնաճյուղը կազմակերպեց Քայլարշաւ մը ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.-ի Արմէն Քէլպէ-Ալեք Մանուկեան վարժարանին: Տարբեր տարիքի աւելի քան 150 մասնակիցներ, որոնց մէջ նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի սկաւտական նուագախումբը, 6 քիլոմէթր Բալեցին Վիլ տը Աէն Լորանի շրջանին մէջ:



Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի մասնաճյուղի հիմնադրութեան 50-ամեակը նշուեցաւ շարք մը ձեռնարկներով, որոնք սկիզբ առին Մարտ 9ին տեղի ունեցած յատուկ հանդիսութեամբ: Այդ հանդիսութեան ընթացքին պատուուեցան մասնաճյուղին նախկին Ատենապետները: Տօնախմբութիւնները եզրափակուեցան Կալա-պարահանդէտով մը, որ տեղի ունեցաւ 18 Մայիս 2008ին, Chateau Vaudreuil-ի մէջ, ներկայութեամբ շուրջ 300 հիւրերու:



Ուրբաթ, 7 Մարտ 2008ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Թորոնթոյի մասնաճյուղը կազմակերպեց «Պատմական Արեւմտահայասանի Փոխուող Տարածք. Խորհրդածութիւններ դէպի անցեալը կատարուած ուղեւորութեան մը առիթով» սահիկներու ցուցադրութեամբ դասախօսութիւն մը, Գալիֆորնիոյ Համալսարանի Արդի Հայոց Պատմութեան Ամբիոնի Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի կողմէ:



Հ.Բ.Ը.Մ.ի Կլեմտէյլ-Փաստինա մասնաճիւղի կազմակերպած «Արուեստի երեկոն», որ տեղի ունեցաւ 16 Նոյեմբեր 2008ին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

«Արտաւագդ» թատերախումբ.– Լարֆ երաժշտական ընկերակցութեան հետ գործակցաբար, 2009ին Տիգրան Զուխանեանի վերայայտնաբերուած «Զէմփրէ» օփերէթի ներկայացումը կարեւոր իրագործում մըն էր տարեկան աշնանային թէ գարնանային ներկայացումներուն կողմին: Թատերախումբի Յանձնախումբը գեղեցիկ մտայղացումը ունեցաւ նաեւ կազմակերպելու յորելեանկան հանդիսութիւն մը՝ նուիրուած Սամուէլ Իլաննեանի մշակութային-թատերական եւ ազգային-հասարակական գործունէութեան 65-Ամեակին: 27 Յունիս 2009ին տեղի ունեցած հանդիսութեան ընթացքին Սամուէլ Իլաննեան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի «Նախագահական Պատուոյ շքանշան»ին:

ՃԻՆՁՆՈ Ֆրեզնոյի մասնաճիւղը, հայերէնի գործածութիւնը փառաբերելու նպատակով գաղութին անդամներուն համար խօսակցական հայերէնի դասընթացներ կազմակերպեց: Այդ դասընթացները հետաքրքրութիւն ստեղծեցին եւ խանդավառութեամբ ընդունուեցան:

ԿԼԷՏԷՅԼ-ՓԱՍՏԻՆԱ 16 Նոյեմբեր 2008ին, մասնաճիւղը Արուեստի երեկոյ մը կազմակերպեց: Հարիւրաւոր հանդիսատեսներու ներկայութեան տեղի ունեցած այդ երեկոյին ելոյթ ունեցան երիտասարդ երաժիշտներ եւ երգիչներ:

ՀԱՅ ԿԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ Հայ Կին Յանձնախումբը 2008ի եւ 2009ի ընթացքին դասախօսութիւններու եւ խորհրդաժողովներու շարք մը կազմակերպեց, որոնց շարքին՝ հայկական ժառանգութեան նուիրուած իր երկրորդ ձեռնարկը: Այդ ձեռնարկը լուսարձակի տակ առաւ յատկապէս կին յորինողներու արձանագրած յաջողութիւնները երաժշտութեան ասպարէզին մէջ, ինչպէս նաեւ պատուեց վաւերագրական ֆիլմերու հեղինակ Գառլա Կարապետեանը: Յանձնախումբին կազմակերպած ձեռնարկներէն էին նաեւ «Ազգային գոյատեւման համար պատասխանատուութիւն» միւլթիմիա դասախօսութիւնը եւ Արուեստի Սահակեանի հետ զրոյցը՝ դարերու ընթացքին հայ կին ղեկավարներու եւ փառաբանական գործիչներու դերակատարութեան շուրջ:

Լոս Անճելոսի Գալիֆորնիոյ Պետական Համալսարանին հետ գործակցաբար, Հայ Կին Յանձնախումբը կազմակերպեց իր «Հայ Համայնքին իրավիճակը Միացեալ Նահանգներու մէջ» խորագրով տարբեր եւ հաղորդակից մարզեր ընդգրկող խորհրդաժողովները, որոնց նպատակն էր ֆինանսել Միացեալ Նահանգներու հայկական համայնքներու ներկայ իրականութիւնը:

Հայ Կին Յանձնախումբը 2009ը եզրափակեց «Հայ Կինը Հայկական Ժողովրդական Բանահիւսութեանց մէջ» միւլթիմիա դասախօսութեամբ մը: Հիւր դասախօսներ ղեկավարեցին ժողովրդական աւանդավէպերուն մէջ հայ կնոջ տիպարին շուրջ ընթացող ֆինանսումը: Այս ձեռնարկը մաս կը կազմէր ընկերային եւ մշակութային միութիւն նուիրուած դասախօսութեանց շարքին:

ՕՐԷՆՉ ՔԱՌԻՆՅԻ Մասնաճիւղը 2008ին մասնակցեցաւ հայկական համագաղութային ձեռնարկին, ինչպէս նաեւ Օրէնն Քաունթիի տարեկան փառատօնին:

ՍԱՆ ՅԵՐՆԱՆՏՈՅԻ ՀՈՎԻՏ 2008ին մասնաճիւղը տօնեց իր հիմնադրութեան 20-ամեակը: Մայիս 2009ին Հ.Ե.Ը.-ի «Սարդարապատ» պարախումբը ելոյթներ ունեցաւ Գանոկա Փարֆի Նագարեան կեդրոնին մէջ:

ՍԻԼԻՔՈՆ ՀՈՎԻՏ Հ.Բ.Ը.Մ.-ի Սիլիկոն Հովիտի եւ Համագաղութի Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան Ն. Ադրալեան մասնաճիւղերը Ապրիլ 2009ին «Հանդիպում» խորագրով գեղարուեստական ձեռնարկ մը կազմակերպեցին, որուն



Հայ Կին երիտասարդական Շրջանակը կազմակերպիչն էր Հայ Կին Խորհրդաժողովին: Նկարին մէջ կ'երեւին Թերեզա Հայրապետեանը, Թամար Գեորգեանը, Սիլիքա Քէօսայեանը, Ազնիւ Շաբրլեանը, Նելլի Նագուպեանը, Թայլի Նագուպեանը (Փաստարանուհի), ինչպէս նաեւ Alpha Epsilon Omega Fraternity կազմակերպութեան անդամները:



Հ.Բ.Ը.Մ.-ի Ալեք Մանուկեան Կեդրոնի Տիկնանց Յանձնախումբին կազմակերպած ճաշկերոյթ-հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Փաստինայի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ, Կիրակի, 15 Մարտ 2009ին: Այս առթիւ պատուեցաւ Յակոբ Փիանտարեանը իր երկար տարիներու ծառայութեան համար: Նկարին մէջ (աջին) մեծարեալը՝ Յակոբ Փիանտարեան, եղբոր՝ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի հաշուապահական բաժնի երկարամեայ տնօրէն Պետրոս Փիանտարեանի հետ:

ներկայ գտնուեցան Մոնթեպելլի շուրջ 500 հանդիսատեսներ: Գեղարուեստական յայտագիրը բաղկացած էր երգերի և բանաստեղծությունների ընթերցումների:

Հ.Բ.Ը.Մ.-ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱՎԻՖՈՐՄԻՈՅ ԾՐՋԱՆԱԿԱՑԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Գաւիֆորմիոյ Շրջանակային Յանձնաժողովը 17 Հոկտեմբեր 2009ին կազմակերպեց իր Տասներորդ Տարեկան շահահանդէսը: Երեկոյթին ներկայ գտնուեցան աւելի քան 500 հիւրեր: Հանդիսութեան ներկայ էր նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահ Պերն Սեդրակեան: Պահպանելով բարեբարներ պատուելու աւանդութիւնը, Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Գաւիֆորմիոյ Շրջանակային Յանձնաժողովը մեծարեց ազգային բարեբարներ՝ Տէր Եւ Տիկին Վաչէ Եւ Թամար Մանուկեանները, որոնք 11 միլիոն ամերիկեան տոլարի աննախընթաց եւ իշխանավայել նուիրատուութիւն մը կատարեցին Հ.Բ.Ը.Մ.ին, Գաւիֆորմիոյ Հ.Բ.Ը.Մ.-ի Փաստիւնայի Վաչէ Եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանին եւ Կեդրոնին ի նպաստ: Նոյեմբեր 2009ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Գաւիֆորմիոյ Շրջանակային Յանձնաժողովը կազմակերպեց մեծատաղանդ ֆանդակագործ եւ նկարիչ Էմիլ Գագազի ցուցահանդէսը եւ մեծարման երեկոն: Երեք օր տեւողութեամբ ցուցահանդէսին ներկայ գտնուեցան շուրջ 1500 արուեստասէրներ:

Հ.Բ.Ը.Մ.-ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱՎԻՖՈՐՄԻՈՅ ԾՐՋԱՆԱԿԱՑԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ-ԱՍՊԵՏՆԵՐ Յունիս 2009ին Լոս Անճելոսի Ասպետներու Համախմբումը կազմակերպեց իր հինգերորդ տարեկան ձեռնարկը «Մտաւորականներու Հետ Հանդիպում» խորագրով, 300 մասնակիցներու ներկայութեամբ: Համախմբումը հիւրընկալեց նաեւ թուրք պատմաբան, Պահչէշէհիբ համալսարանի դասախօս, Դոկտ. Ճէնկիզ Աբթարը եւ Միշիկընի Համալսարանէն Փրոֆ. Գէորգ Պարտագնեանը, որոնք խօսեցան Հայաստան-Թուրքիա հաշտեցման նախաձեռնութիւններուն մասին:

ԻԼԼԻՆՈՅ Ծիֆակոյի մասնաճիւղը 2008ին եւ 2009ին համահովանաւորեց կարգ մը մշակութային ձեռնարկներ տեղւոյն հայկական կազմակերպութիւններուն հետ համագործակցութեամբ: Մասնաճիւղը հիւրընկալեց նաեւ Ուիլեամ Սարոյեանի «Կեանքիդ ժամանակը» քատերական ներկայացումը, որուն հասոյթը տրամադրուեցաւ Հայաստանի Հայորդեաց տուններուն:

ՄԱՍՍԱՉՈՒՍԷՑ Փետրուար 2009ին Նիւ Ինկլընտի մասնաճիւղը յատուկ ձեռնարկով մը անուանակոչումը կատարեց Հ.Բ.Ը.Մ.-ի Ուոթըրթաունի Կեդրոնի Մայքըլ Կիւլպէնկեան ընթերցարահին:

ՆԻԻ ԵՈՐՔ Շարունակելով իր համագործակցութիւնը Մ.Ա.Կ.-ի Զարգացման Ծրագրին հետ, Հ.Բ.Ը.Մ.-Մ.Ա.Կ. Խմբակցութիւնը 24 Յուլիս 2008ին, Մ.Ա.Կ.-ի Նիւ Եորքի կեդրոնատեղիին մէջ կազմակերպեց իր առաջին հանգանակութիւն-ընդունելութիւնը, որուն ընթացքին գոյացաւ 6,000 ամերիկեան տոլար՝ ի նպաստ Մ.Ա.Կ.-ի Զարգացման Ծրագրի «Երիտասարդներու Գործունդում» ծրագրին, որուն նպատակն է նուազեցնել անգործութիւնը Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ գործընկեր կազմակերպութիւններու մէջ երիտասարդ նոր շրջանաւարտներ մասնակից դարձնել ասպարէզային փորձառութեան 6-ամսեայ վճարեալ ծրագրի մը: Աւելի քան 100 հիւրեր, ներառեալ Հ.Բ.Ը.Մ.ի եւ Մ.Ա.Կ.-ի բարձրաստիճան ներկայացուցիչներ, ներկայ գտնուեցան ընդունելութեան: Հանգանակութեան նպատակով երկրորդ ընդունելութիւնը տեղի ունեցաւ 11 Յունիս 2009ին, ի նպաստ Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկին: Հանգանակուած յաւելեալ գումարներով Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկի 20 նոր ուսանողներ կրթաթոշակներ ստացան:

ՓՆՆՍԻԿՎԱՆԻՍ Փենսիլվանիոյ դպրոցներու եւ աշխատավայրերու մէջ հայ երիտասարդներուն միջեւ բարեկամութեան մշակումը ֆաշալերելու նպատակով տեղւոյն մասնաճիւղը ընկերային երեկոյ մը կազմակերպեց, որ տեղի ունեցաւ Յունիս 20, 2009ին՝ մասնակցութեամբ 200է աւելի հիւրերու:



Սամուէլ Իլաննեանի մշակութային-քատերական եւ հասարակական գործունէութեան 50-ամեակին եւ ծննդեան 80-ամեակին առիթով կազմակերպուած մեծարանքի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շարաք 27 Յունիս 2009ին, Միւրթեան Փաստիւնայի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ: ԱՄՆ-ի Արեւմտ. Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեան «Ս. Սահակ-Ս.Մեսրոպ» Հայրապետական շէնքումը կը յանձնէ յորեքերին:



Շարաք, 7 Նոյեմբեր 2009ի երեկոյեան տեղի ունեցաւ աշխարհահռչակ ֆանդակագործ եւ գեղանկարիչ Էմիլ Գագազի նուիրում մեծարման հանդիսութիւնը, Միւրթեան Փաստիւնայի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ: Ներկայ գտնուեցան մեծ թիւով գաղութահայ ներկայացուցիչներ:



Մ.Ա.Կ.-ի մտ Հայաստանի Հանրապետութեան ՄՆայուն ներկայացուցչութեան ղեկավար, Արտակարգ եւ Լիազօր Գնսպան Արմէն Մարտիրոսեան եւ Եւրո-Ասիական Խումբի Հիմնադիր-Նախագահ Իան Պրէմմէր, (կեդրոնը) Հ.Բ.Ը.Մ.-ի ՄԱԿ.-ի Յատուկ Յանձնախումբի անդամներու հետ, Նիւ Եորքի Մերկերեան ցուցարահին մէջ տեղի ունեցած դրամահաւաքին ընթացքին:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ Հարաւային Ամերիկայի ամենահայտնո՞ծ քաղաքներէն Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղը, տարբեր ձեւերով շարունակեց ազգային ինքնութեան պահպանումին ուղղուած իր գործունէութիւնը: Յատկապէս նշանակալի էր Միութեան նուիրատուութեամբ Պուէնոս Այրէս նահանգի մայրաքաղաք Լա Փլաթայի աշխարհահռչակ Մայր Տանարին կից հրապարակին վրայ խաչքարի մը գետեղումը:

Միութեան կեդրոնէն ներս շարունակուեցան աւանդական դարձած «Ուրբաթ Օրուն Ճաշ»-երը, ուր ամէն շաբաթ կը հիրասիրուին հարիրաւոր հայ թէ օտար հիւրեր: Մեծ ընդունելութիւն գտած այս ձեւերը 2008էն ի վեր տեղի կ'ունենայ նաեւ Շաբաթ երեկոները: Տիկնանց Օժանդակ Մարմինը, որ հայկական ցաւերու պատրաստութեան կանոնաւոր դասընթացներ կը կազմակերպէ, Ապրիլ 2009ին հայկական ցաւատեսակներու նուիրուած գեղատիպ գիրք-ուղեցոյց մըն ալ հրատարակեց, որուն առաջին տպագրութիւնը անմիջապէս սպառեցաւ: 7 Մայիս 2009ին, մասնաճիւղը տօնեց իր հիմնադրութեան 98-րդ տարեդարձը եւ կը պատրաստուի 2011ին իր հիմնադրութեան 100-ամեակի տօնախմբութեան:

